# Ազգ

Azg

4 ՄԱՐՏ 2011 ՈՒՐԲԱԹ 38(4657)

ISSN: 1829-1651


## Վիրավորվել է հայ զինծառայող

ԼՂՀ-ի ՊԲ-ի լրատվության եւ քարոզչության բաժնից տեղեկացնում են, որ մարտի 3-ին, ժամը 11:10-ի սահմանում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան (Ջրաբերդի) ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում հակառակորդի արձակած գնդակից թեթեւ վիրավորում է ստացել ՊԲ-ի ժամկետային զինծառայող, 1991 թ. ծնված Հովհաննես Աշոտի Ավդալյանը: Դեպքից անմիջապես հետո վիրավորը տեղափոխվել է զինվորական հոսպիտալ: Միջադեպի մանրամասները պարզելու համար տարվում է քննություն: Հիշեցնենք, որ նույն Ջրաբերդի ուղղությամբ փետրվարի 17-ին, ըստ ԼՂՀ-ի ՊԲ-ի հաղորդագրության, ադրբեջանական կողմը իրականացրել էր դիվերսիոն գործողություն, ինչը ճնշել էր ղարաբաղյան կողմը:

Հ. Ա.

## Սոչիում Երեւանն ակնկալում է Բաքվի «այո»-ն, «այո, բայց»-ի փոխարեն

### *Նալբանդյանը ելույթ է ունեցել Վիեննայի դիվանագիտական ակադեմիայում*


ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա




**Նախարար Նալբանդյանը** չորեքշաբթի երեկոյան ելույթ է ունեցել Վիեննայի դիվանագիտական ակադեմիայում ու հանդիմանել Ադրբեջանին՝ ԼՂ հակամարտության հրադադարը ռազմական նոր գործողությունների պատրաստությամբ շարաշահելու համար, «Հայաստանը կշտամբում է Ադրբեջանին՝ ռազմական ուղին հետապնդելու համար» վերնագրյալ հոդվածում մարտի 3-ին գրում է ավստրիական «Թիրոլեր թագեսցայթունգը»: Հայաստանը ձգտում է խնդրի ամբողջական լուծման 6 կետ ներառող ծրագրով, իսկ Ադրբեջանը ոչ թե ամբողջական փաթեթի, այլ առանձին կետերի վերաբերյալ է ուզում տեսնել քննարկումը: Հայաստանը հաստատապես վկայակոչում է «ԼՂ բնակչության ազատ որոշումը» նախարար Նալբանդյանի խոսքն է մեջբերում թերթը՝ շարունակելով՝ Ադրբեջանը այդուհանդերձ մերժում է ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Իր ելույթում Նալբանդյանը շեշտել է, թե իր երկրի տեսակետը համահունչ է միջազգայինին, եւ ԱՄՆ նախագահ Օբաման դեկտեմբերին Աստանայի ԵԱՀԿ գագաթաժողովում պաշտպանել է Հայաստանի դիրքորոշումը: Նալբանդյանը գովել է նաեւ Ղարաբաղի հարցով հանդիպումներում Ռուսաստանի նախագահ Մեդվեդեւի կառուցողական դերակատարումը: Սոչիում շաբաթ օրը կայանալիք առաջիկա հանդիպմանն անդրադառնալով՝ նախարար Նալբանդյանը ցանկություն է հայտնել Ադրբեջանի «այո»-ն լսել Հայաստանի ներկայացրած ամբողջական առաջարկներին, «այո, բայց»-ի փոխարեն: ՀՀ արտգործնախարարը ներկայացրել է, թե Ադրբեջանը մերժել է Մինսկի խմբի առաջնորդությամբ բանակցություններում Հայաստանի բոլոր առաջարկները, բացի դրանից նա հրադադարն օգտագործել է ուժեղ սպառազինվելու համար:

*Տես էջ 2*

ՀԱԿԻՐՃ

## Ռուսաստանի ԱԳՆ-ն մեկնաբանել է առաջիկա «եռակողմը»

**Ռուսաստանի ԱԳՆ-ն մեկնաբանել է Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների առաջիկա հանդիպումը, որ կայանալու է մարտի 5-ին Սոչիում: «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ բանակցությունների եռակողմ ձեւաչափը թույլ կտա մոտեցնել երկու կողմերի դիրքորոշումները եւ ամրապնդել վստահության միջոցները: Ռուսաստանը ԵԱՀԿ Մինսկի խմբի այլ համանախագահների աջակցությամբ բոլոր ջանքերը գործադրում է առաջընթացի հասնելու համար: 2010-ին երեք հանդիպում է կայացել, եւ այդ հանդիպումները թույլ են տվել մոտեցնել կողմերի դիրքորոշումները: Կոնկրետ Աստրախանում Իլհամ Ալիեւն ու Սերժ Սարգսյանը սկզբունքային պատրաստակամություն են հայտնել շարունակելու աշխատանքը կարգավորման հիմնարար սկզբունքների վրա», երեկ հայտարարել է Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչը:**

Հ. Ա.

## Ի՞նչ դիրքորոշմամբ են Բաքվից մեկնում Սոչի

**Մարտի 5-ին, ինչպես արդեն տեղեկացրել է «Ազգը», Ռուսաստանի նախագահը Սոչիում կընդունի Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին: Բնականաբար, հանդիպման այս կազմը վկայում է, որ օրակարգում է լինելու ԼՂ-ի հիմնահարցը: Մինչ այդ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Վիեննայի Դիվանագիտական ակադեմիայում հերթական անգամ բարձրաձայնեց, որ Հայաստանը խոսում է խաղաղության մասին, մինչդեռ՝ Բաքուն քարոզում է պատերազմ՝ շարունակ խախտելով հրադադարի ռեժիմը՝ վնաս հասցնելով խաղաղ գործընթացին: Հայաստանի արտգործնախարարի այս հայտարարությանը Բաքվից պատասխանել է ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Էլհան Պոլուխովը. «Այսօր անժխտելի է ադրբեջանական հողերի գրավման փաստը, հայկական կողմը պետք է սկսի զավթողական ուժերի դուրսբերումը Ադրբեջանի տարածքներից եւ ոչ թե խոսի իր սանձազերծած ագրեսիայի հետեւանքների մասին: Ադրբեջանն այսօր մասնակցում է բանակցային գործընթացին, սակայն մենք մեզ իրավունք ենք վերապահում՝ համաձայն միջազգային իրավունքի, օգտագործել բոլոր մեխանիզմները՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու համար», հայտարարել է Պոլուխովը: Ի դեպ, երեկ Իլհամ Ալիեւը այցելել է Բաքվի մեքենաշինության գործարան, որտեղ հետեւել է ադրբեջանական զրահատեխնիկայի արտադրության ընթացքին:**

Հ. Ա.

## Պատգամավորները հորդորել են առեւտրականներին՝ չենթարկվել ոստիկաններին. պարզաբանում է ոստիկանությունը



*Նկարում՝ Զարուհի Փոստանջյանը փորձում է քաշել ոստիկանի ականջը, մինչ վերջինս հրում է Արմեն Մարտիրոսյանին:*

**Երեկ կառավարության շենքի մոտ բացօթյա առեւտրի արգելքի դեմ բողոքող անձանց, ոստիկանների ու «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների միջեւ բախում է տեղի ունեցել: Ըստ «Ժառանգության»՝ երեկ առավոտյան ոստիկանները, խախտելով «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր ու ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը, բիրտ ուժ են կիրառել ու ցրել կառավարության շենքի մոտ բացօթյա առեւտրի իրավունքից զրկված քաղաքացիների բողոքի խաղաղ ցույցը:** *Տես էջ 2*

## ՄԱԿ-ը Լիբիայում տեսնում է մարդկության դեմ ուղղված հանցագործություն

Երեկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշում կայացրեց, որ Լիբիայի իշխանությունները մեղավոր են մարդկության դեմ գործած հանցագործության համար, եւ հարցն ուղարկեց Միջազգային քրեական դատարանի քննությանը: Վերջինիս դատախազ **Լուիս Մորենո-Օկամպոն**, իր հերթին, հանդես եկավ հայտարարությամբ. «Քադդաֆին, նրա որդիներն ու խորհրդականները մեղադրվում են մարդկության դեմ իրագործած հանցագործության մեջ: Ոչ ոք իրավունք չունի կրակելու խաղաղ բնակիչների վրա: Մենք հետաքննություն կանցկացնենք՝ Լիբիայում փետրվարի 15-ին տեղի ունեցած մարդկության դեմ իրագործված հանցագործության կապակցությամբ: Առաջիկա շաբաթների ընթացքում մենք կպարզենք, թե ովքեր են պատասխանատու այդ լրջագույն հանցագործության համար»: Մորենո-Օկամպոն հավելել է, որ իրենք «կքննարկեն նաեւ լիբիական ընդդիմության նկատմամբ հարուցված նույնատիպ հայցերը, եթե ընդդիմադիր ուժերը նույնպես հանցագործություն իրականացնեն»:

Հ. Ա.

## «Անատոլիայում հայերը 500 հազար թուրք են սպանել»

### *Թուրքական պատմական ընկերության նախորդ նախագահը խոստովանել է հայսպանագործությունների մեջ*

Երեկ Կ. Պոլսո հայոց պատրիարքարանի անմիջական վերահսկողության տակ գտնվող «Հայ թերթ» կայքէջը հրապարակել է գերմանաբնակ թուրք մտավորական **Դողան Աքհանլու** հոդվածաշարի առաջին մասը: Նա գրել է. «Մենք՝ թուրքերս, որքան հպարտանանք, տեղին է: Հավերժ պետականություն ենք ունեցել: Ո՞վ է ասում, որ թուրքերը ոչ մի հայսպանագործություն չեն արել: Անցյալ դարի առաջին քառորդին, դեռ 1915-ը ամբողջովին չբոլորած, այնպիսի հայսպանագործություն ենք արել, որ զարմացած գերմանացիները այդ հայսպանագործությունը կիրառելու համար սպասել են մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմը: Մեր հայսպանագործությանը թուրքերի եւ քրդերի հետ մասնակցեցին նաեւ Բալկաններից, Կովկասից փախած գաղթականները, կարճ ասած բոլոր տգետ արարածները, դուրս գալով մարդասպանի, փաշաների մեղսակիցը եղան, արյունոտ ձեռքերով ապականեցին իրենց խիղճն ու ցեղին»:

Հայսպանագործության պետականորեն հովանավորման, մի քիչ էլ ֆինանսական խրախուսման դեպքում, նորի համար նախադրյալներ են ստեղծվում: Նորի պարագայում խոսքը վերաբերում է Թուրքական պատմական ընկերության նախորդ նախագահ, Անկարայի «Գազի» համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն եւ հայտնի կեղծարար, պրոֆ. **Յուսուֆ Հալաչօղլուին**: Օրերս Բաբերդում (Բայբուրթ) նա հանդես է եկել «Կովկասյան քաղաքականությունն ու թուրք-ադրբեջանական հարաբերությունները Հայաստանի հետ» թեմայով դասախոսությամբ:

Ինչպես երեւում է, Հալաչօղլուն ոչ թե հարաբերություններին է անդրադարձել, այլ կրկնել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պետության ծամծմված թեզերը, թե Անգլիան, Ֆրանսիան կենսական շահեր էին հետապնդում Օսմանյան կայսրության տարածքներում, Ռուսաստանը՝ նմանապես, որը «Թուրքիայում հայկական պետության կազմավորման» խոստումներով իր կողմը գրավեց հայերին, որոնք էլ ապստամբելով Վանում, Էրզրումում, Բիթլիսում, Արդահանում եւ Բայբուրթում, սպանեցին շուրջ 500 հազար թուրքի:

Այնուհետեւ Հալաչօղլուն շարունակել է. «Թեեւ մենք փաստաթղթերով ապացուցել ենք հայերի կատարմամբ իրականացված կոտորածները, սակայն նրանք առ այսօր շարունակում են պնդել, որ Թուրքիան իրենց ենթարկել է ցեղասպանության: Իրականում մեղավորը հայերը չեն, այլ այն պետությունները, որոնք խրախուսում են հայերին»:

Հ. Չ.

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Շարունակում ենք Արշիլ Գորկուն նվիրված հոդվածաշարի հրապարակումը՝ Հակոբ Ծուլիկյանի թարգմանությամբ: Գորկու կյանքային մանրամասների նոր բացահայտումներ, ըստ Մելիսա Քերի: XX դարասկզբի արեւմտահայ (Վան) ազգային-կուսակցական կյանքի էջերից. դպրոցական տետուչ, մանկավարժ Գրիգոր Աճեմյանի սպանության՝ ժամանակի մամուլի անդրադարձներից, մինչեւ... Գուրգեն Մահարի: «Հայկական աշխարհ» հաղորդաշարի («Շանթ» հեռուստաընկերություն) մի հրապարակման հետքերով. Հարություն Մարությանի արձագանքը՝ Տայքի հայկական եկեղեցիներին: Արծվի Բախչինյանի «ճապոնական» տաճարների լռությունը-ճամփորդական տպավորություններ:**

Մ. Բ.

# ՀԱԿ-ի վերջնագիրը Գալուստ Սահակյանին հիշեցրեց 90-ականների թերթերը

Մարտի 1-ին կայացած ՀԱԿ-ի հանրահավաքին առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը հրապարակեց իշխանություններին ուղղված իրենց պահանջը, այն է՝ 15 կետ պարունակող վերջնագիր, որի ամբողջովին կամ մասնակի կատարումից հետո միայն ընդդիմությունը կհամագործակցի իշխանությունների հետ: «**Ազգը**» մարտի 2-ի համարում արդեն տեղեկացրել է, թե կոնկրետ ինչ պահանջներ է ներկայացնում ընդդիմությունը, հիշեցնենք՝ խոսքը «քաղբանտարկյալներին ազատ արձակելու», «նվազագույն աշխատավարձը բարձրացնելու», «բացօթյա առեւտուրն արգելող որոշումը չեղյալ համարելու» եւ մի շարք պաշտոնյաների հրաժարականը պահանջելու մասին է: Ընդ որում՝ ընդդիմությունը պահանջում է, որ այս ամենը լրիվ կամ զգալի չափով կատարված լինի մինչեւ մարտի 17-ը՝ իրենց հերթական հանրահավաքը: Բնականաբար իշխանությունը՝ նույնիսկ ցանկության դեպքում էլ չի կարող իրականացնել ՀԱԿ-ի պահանջներն ամբողջովին, հետեւաբար ՀԱԿ-ը, առաջ քաշելով վերոհիշյալ պահանջները, ամենեւին էլ ցանկություն չունի համագործակցելու իշխանությունների հետ:

Ինչեւէ, երեկ իշխանությունից **Գալուստ Սահակյանը** եւ ընդդիմությունից ՀԱԿ համակարգող **Լեւոն Զուրաբյանը** ապացուցեցին, որ ՀԱԿ-իշխանություն համագործակցությունը, համենայն դեպս տեսանելի համագործակցությունը, գոնե առաջիկայում անհնար է: Այսպես՝ նախ իշխող Հանրապետական կուսակցությունից **Էդուարդ Շարմազանովը** հայտարարեց. «Մենք չենք ընդունում վերջնագրի եւ վերջնաժամկետների լեզուն, եւ պարոն առաջին նախագահը շատ լավ պետք է գիտակցի, որ ժողովրդավարության կանոններից չի բխում քաղաքական ուժերի՝ մեկը մյուսի նկատմամբ վերջնագրի լեզվով խոսելը: Եթե իր նպատակներն անկեղծ են, ապա առանց նախապայմանների, առանց վերջնագրերի կարող ենք նստել՝ ցանկացած խնդիր քննարկել: Հանրապետականը եւ հանրապետության նախագահը բազմաթիվ անգամներ ապացուցել են, որ բաց հրապարակային երկխոսության կողմնակից են, ավելին՝ մենք մի քանի անգամ նախագահի առաջարկով բաց խորհրդատվություններ ենք անցկացրել տարբեր քաղաքական ուժերի հետ, սակայն ՀԱԿ-ը դա մերժել է: Հանրապետականը բաց է քաղաքական երկխոսության համար բոլորի հետ»:

Սրանից հետո Գալուստ Սահակյանը նշեց. «Եթե նայենք 90-ականների թերթերը, ապա պարզ կլինի, որ այն ժամանակ էլ ճիշտ նույն հարցադրումներով էր հանդես գալիս այն ժամանակվա ընդդիմությունը»: ԱԺ-ում Հանրապետական խմբակցության ղեկավարը նաեւ նշել է, որ ՀԱԿ-ի պահանջների ներկայացումը արվում է հասարակությանը շեղելու համար, իսկ իշխանությունը, ըստ Սահակյանի, գիտակցում է, որ խնդիրներ կան ու հասու է դրանք լուծելու. «Երբ նայում ենք տարիների հեռվից, նկատում ենք, որ բավականին լուրջ խնդիրներ են լուծվել երկրում, զարգացման գործընթացներ են գնացել», ասել է Սահակյանը՝ ընդհանուր առմամբ «վիրավորանք» համարելով ՀԱԿ-ի կողմից պահանջներ ներկայացնելը իշխանություններին:





Մինչդեռ ՀԱԿ համակարգող Զուրաբյանը երեկ կայացած ասուլիսում, «տղայական մոտեցում» է որակել հանրապետական գործիչների այս պատասխանները՝ ընդդիմության պահանջներին: «Շարմազանովների եւ գալուստսահակյանների ասածով հնարավոր չէ որեւէ բան հասկանալ: Նրանք մեր պահանջները պարզապես ընդունել են որպես մարտահրավեր իրենց ամբիցիաներին եւ փորձել են միանգամից պատասխան տալ, մինչդեռ խնդիրը շատ ավելի բարդ է եւ ամենեւին էլ նրանում չէ, որ մեկ կամ մյուս ուժը հաղթանակած դուրս գա հասարակության աչքերում: Կարծում եմ՝ այսօրվա տղայական ռեակցիայից հետո, որը հարիր չէ որեւէ իշխանության, նրանք դեռ ժամանակ ունեն մտածելու այս ամենի մասին եւ ավելի ադեկվատ պատասխաններ տալու հասարակությանը», ասել է Զուրաբյանը:

Ինչպես սովորաբար պատահում է նման դեպքերում, Գալուստ Սահակյանն իր հերթին պատասխանել է Զուրաբյանի «տղայական մոտեցում» ռեպլիկին, ասելով. «Դա իրենց մոտ է տղայական մոտեցում: Հենց տղայական մոտեցումով էլ նրանք ապակողմնորոշեցին ժողովրդին մարտի 1-ին»:

Ինչեւէ, ՀԱԿ-իշխանություն «համագործակցությունը» շարունակվում է բացառապես միմյանց հեռակա կարգով պատասխանելու առումով, ինչը նշանակում է երկու բան. իշխանությունները ամենեւին էլ չեն բավարարելու ՀԱԿ-ի 15-կետանոց պահանջագրի գոնե որոշ կետերը, եւ երկրորդ՝ մարտի 17-ին ՀԱԿ-ի հերթական հանրահավաքը կրկին կլինի «հանգրվանային»:

Հ. ԱՓՅԱՆ

# Սոչիում Երեւանն ակնկալում է Բաքվի «այո»-ն, «այո, բայց»-ի փոխարեն

*1-ին էջից*

Հայաստանի արտգործնախարարության քաղաքական անվտանգության տնօրեն Լեւոն Այվազյանը տարեսկզբին Վիեննայում ասել էր, թե նախկին՝ ԽՍՀՄ ժամանակների կարգավիճակին հետդարձն անհնարին է: Մինսկի խմբի բանակցություններում ԼՂ-ն իբրեւ հակամարտության կողմ չի ընդունվում, բայց իրականում արդեն գործող պետություն է բոլոր մարմիններով՝ ներառյալ նախագահ ու խորհրդարան: Պարզապես ազնիվ չէ պահանջել, որ «Հայաստանն առաջին քայլն անի»:

Ինչ վերաբերում է հարեւան Թուրքիայի հետ հարաբերություններին, ավստրիական թերթը գրում է, թե Երեւանի առաջարկն է եղել առանց նախապայմանների բնականոն հարաբերություններ սկսելը, եւ շարունակում՝ արձանագրությունները չվավերացնելու Թուրքիայի վարքագիծը ընտրություններով պայմանավորելը Նալբանդյանը պատրվակ է համարել: Մերձեցումը բխում է տարածաշրջանի, նաեւ Ադրբեջանի շահերից, նկատել է տվել արտգործնախարարը: Հայոց ցեղասպանության մասին հարցին նախարար Նալբանդյանի ձայնը հաշտեցնող երանգներ ուներ, գրում է «Թիրոլեր թագեսցայթունգը» մեջբերելով՝ մոտ հարյուր տարի է, ինչ Թուրքիան չի ճանաչում այս իրողությունը (ցեղասպանությունը-Ան. Հ.), «բայց բանակցությունները փաստում են, որ միմյանց հետ կարող ենք խոսել»: Նալբանդյանը հիշատակել է, թե վերջին ժամանակները շատ թուրքեր են այցելել Ծիծեռնակաբերդի հուշարձան, ինչպես նաեւ թուրք մտավորականների ներում հայցելը:

Ավստրիական մեկ ուրիշ՝ Wirtschafts Blatt-ը Վիեննայի դիվանագիտական ակադեմիայում ՀՀ արտգործնախարարի վերոհիշյալ ելույթին անդրադառնալով գրում է, թե Նալբանդյանն արտահայտել է իր երկրի ցանկությունը՝ Երեւանում Ավստրիայի դեսպանություն բացելու վերաբերյալ: Անկախ Հայաստանը առաջին օրերին բացեց իր դեսպանությունը Վիեննայում, Երեւանը սպասում է համարժեք քայլի, որ կօգնի համագործակցությունը առաջ տանել, ասել է Էդվարդ Նալբանդյանը՝ նշելով, թե Հայաստանը ձգտում է Ավստրիայի հետ ունենալ «լայն ու խորացված» հարաբերություններ տնտեսության, մշակույթի, բոլոր բնագավառներում, ինչպես նաեւ համագործակցություն միջազգային կազմակերպություններում, շեշտել է նախարարը: Նա կարեւոր ներդրում է համարել «Ավստրիական ավիաուղիների» Հայաստան թռիչքները:

ՀՀ արտգործնախարարն իր ավստրիացի գործընկերոջ հետ երկու երկրների դիվանագիտական ակադեմիաների համագործակցության հուշագիր է ստորագրել, որով Վատիկանից հետո աշխարհի ամենահին դիվանագիտական ակադեմիան նորերս Երեւանում բացված համանուն հաստատության հետ կամուրջ է կապում: Ավստրիական լրատուն գրում է, թե Հայաստանը չի հստակեցրել, թե ԵԱՀԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում նախկին արտգործնախարար Ուրսուլա Պլասնիկին է սատարելու, հաստատելով միայն, թե Երեւանը մերժելու է պաշտպանել թուրք թեկնածուին:

ՊԱՐԶԵՑՈՒՄ ԵՆ ԽՈՍՏԱՆՈՒՄ

# Շինարարական թույլտվությունները պարզեցվեցին

Քաղաքաշինության նախարար **Վարդան Վարդանյանը** երեկ լրագրողներին ներկայացրեց կառավարության ընդունած որոշումը շինթույլտվության նոր կարգի մասին: Ըստ նախարարի, նոր որոշմամբ նվազել են շինարարական թույլտվության ստացման ժամկետները, պարզեցվել ընթացակարգերը, նվազեցվել կոռուպցիոն ռիսկերը: Նախկին 137 օրվա փոխարեն շինթույլտվության ստացման ժամկետը հասցվել է 27 օրվա, իսկ մի շարք գործընթացներ, որոնք կառուցապատողները պետք է կատարեին 4 կամ 6 քայլով, կկատարվեն մեկական քայլով: Սահմանափակվել են քաղաքաշինության տեսչության ստուգումները: Այդ տեսչության աշխատակիցները շինարարության ընթացքում միայն մեկ անգամ իրավունք կունենան ստուգում իրականացնելու, իսկ շինարարության ավարտից հետո իրենց ստորագրությունը կդնեն կառույցի ընդունման-հանձնման հանձնաժողովի ակտի տակ: Քաղաքաշինության նախարարը նաեւ տեղեկացրեց, որ այս որոշումն առնչվում է ինչպես տնտեսվարողների, այնպես էլ քաղաքացիների կողմից կառուցվող շինություններին: Շինթույլտվությունները որոշակի տարբերություն կունենան միայն կախված կառույցի չափից եւ նշանակությունից: Ըստ Վարդան Վարդանյանի, նոր կարգն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից:

Ա. Մ.

# Շնորհավորական այց նորընտիր ռեկտորին

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը երեկ այցելեց Երեւանի Խ. Աբովյանի անվ. մանկավարժական պետական համալսարան՝ շնորհավորելու պրն Ռուբեն Միրզախանյանին ռեկտոր ընտրվելու առիթով: Քաղաքավարական փոխադարձ արտահայտություններից հետո հետաքրքրական զրույց ծավալվեց Հայաստանում եւ մասնավորաբար մանկավարժական համալսարանում կրթության վիճակի, դժվար խնդիրների ու դրանց հաղթահարման շուրջ: Նորընտիր ռեկտորը զրուցակիցներին ներկայացրեց պիլոտային այն մի քանի ծրագրերը, որոնց հաջող իրականացումը խոստանում է դրական փոփոխություններ առաջացնել ոչ միայն իր ղեկավարած բուհի, այլեւ ողջ հանրապետության կրթական համակարգում:

# Պատգամավորները հորդորել են առեւտրականներին...

*1-ին էջից*

«Ժառանգության» փոխանցմամբ՝ ոստիկանները քրեական օրենսգրքով անթույլատրելի մի շարք արարքներ են կատարել: Բռնություն են գործադրել խաղաղ ցուցարարների, նաեւ ակցիային մասնակցող պատգամավորներ Անահիտ Բախշյանի, Զարուհի Փոստանջյանի եւ Արմեն Մարտիրոսյանի նկատմամբ, ինչն օրենքով սահմանված «ԱԺ կանոնակարգով»՝ պատգամավորական անձեռնմխելիության խախտում է: Հրմշտոցից Անահիտ Բախշյանն իրեն վատ է զգացել, ցուցարարները շտապ օգնություն են կանչել: Իսկ նախկին քաղբանտարկյալ Վարդգես Գասպարին, որը եւս այդտեղ է եղել, տարվել է ոստիկանության Կենտրոնի բաժանմունք: «Ժառանգությունից» նաեւ տեղեկացանք, որ վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ տեղի ունեցած միջադեպի առիթով ընդունել է Արմեն Մարտիրոսյանին ու «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանին:

Երեկվա միջադեպը դատապարտել ու այդ առնչությամբ վրդովմունք է հայտնել ոչ միայն «Ժառանգությունը», այլեւ «Ժողովրդական կուսակցությունը» (ԺԿ), ինչի մասին տեղեկացանք վերջինիս լրատվական ծառայությունից: ԺԿ-ն դատապարտում է պատգամավորների ու շարքային քաղաքացիների հանդեպ ոստիկանների կիրառած բռնի գործելակերպը ու նշում, թե ոստիկանները դիմել են անհամաչափ գործողությունների: Սակայն կուսակցությունը չի բացատրում ու մանրամասնում՝ որո՞նք են այդ անհամաչափ գործողությունները: Ինչպես ակնկալվում էր, ոստիկանների գործողությունները երեկ երեկոյան դատապարտեց ՀԱԿ-ը՝ առանձին հայտարարությամբ:

Կառավարության շենքի առջեւ կատարվածի կապակցությամբ իր վրդովմունքն է հայտնել նաեւ Ազգային Ժողովի ՀՅԴ խմբակցությունը՝ նշելով, որ իրենց իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքացիների խաղաղ ցույցը իրավապահ մարմինների ներկայացուցիչները խոչընդոտել են՝ ուժ կիրառելով:

Ինչ վերաբերում է Կենտրոնի բաժանմունք տարված Վարդգես Գասպարիին, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից տեղեկացանք, որ երեկ իրենց է զանգահարել փաստաբան Ստեփան Ոսկանյանն ու ասել՝ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կենտրոնի բաժնի աշխատակիցները թույլ չեն տալիս տեսակցել իր պաշտպանյալ Վարդգես Գասպարիին: Ս. Ոսկանյանը խնդրել է պաշտպանի աջակցությունը: Վերջինիս հանձնարարությամբ արագ արձագանքման խումբն այցելել է Կենտրոնի բաժին, որտեղ պարզվել է՝ փաստաբանի հանդիպումը թույլատրվել է, եւ այդ ընթացքում Վ. Գասպարին ու փաստաբանն արդեն հանդիպել են: Ինչեւէ, Վ. Գասպարիին երեկ ազատ են արձակել:

Կառավարության շենքի առաջ կատարված միջադեպի առնչությամբ ոստիկանությունը նույնպես պարզաբանումներ արեց: Ոստիկանության հասարակության հետ կապի ու լրատվության վարչությունից հաղորդեցին, որ մարտի 3-ին՝ ժամը 10.00-ին կառավարության շենքի դիմաց հավաքված քաղաքացիներն իրենց բղավոցներով խանգարել են կառավարության հերթական նիստը, իսկ ոստիկանները փորձել են կարգի հրավիրել հասարակական կարգը խախտող քաղաքացիներին: Սակայն նրանք «Ժառանգության» պատգամավորների (ավելի ուշ նրանց միացել է նաեւ Ստեփան Սաֆարյանը) հորդորներով հրաժարվել են ենթարկվել ոստիկանության օրինական պահանջներին ու շարունակել խախտել հասարակական կարգը: Դրանից հետո ոստիկանության ծառայողները դիմել են կոնկրետ գործողությունների. Վարդգես Գասպարին տարվել է ոստիկանության Կենտրոնական բաժին, իսկ մյուս քաղաքացիներն ուղեկցվել են դեպի Վ. Սարգսյան փողոց: Հասարակական կարգն ապահովելու նպատակով ոստիկանության վերակարգի ծառայողները իրականացրել են իրավաչափ գործողություններ, սակայն ոստիկանությունն այդպես էլ չի պարզաբանում՝ իրականում որո՞նք են այդ իրավաչափ գործողությունները:

Մեր տպավորությամբ, «Ժառանգության» պատգամավորները իրենք են հրահրել միջադեպը, ինչին ոստիկանները ընդառաջել են «հաճույքով»...

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ


«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

| | |
|---|---|
| Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ | / հեռ 521635 |
| Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ | / հեռ 529221 |
| Հաշվապահութիւն (գովազդ) | / հեռ 582960 |
| Լրագրողների սենեակ | / հեռ 581841 |
| Համակարգչ. ծառայութիւն | / հեռ 582483 |
| *Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* | / հեռ 529353 |

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# 1416 բանաձեւի նկատմամբ քաղաքական հանձնառությունը հնարավոր է չեղյալ հայտարարել

## Հարցազրույց քաղաքագետ Հովհաննես Նիկողոսյանի հետ

**- Օրերս հեռահար երկխոսություն էր ծավալվել ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակությունների նախկին եւ ներկա ղեկավարների միջեւ 1416 բանաձեւի վերաբերյալ: Տիգրան Թորոսյանը եւ Դավիթ Հարությունյանը հակառակ տեսակետներ արտահայտեցին բանաձեւի ու նրա վտանգավորության աստիճանի մասին:**

- Ինչպես ամեն մի միջազգային փաստաթուղթ, ԵԽԽՎ 1416 բանաձեւը նույնպես ներառում է տարբեր դրույթներ, որոնք շահագրգիռ կողմերը ազատորեն տարանջատում են ընդհանուրից եւ մեկնաբանում ու շահարկում: Մինչդեռ 1416 բանաձեւը իր էությամբ միջազգային փաստաթուղթ է՝ ընդունված միջազգային (ռեգիոնալ) քաղաքական կազմակերպության կողմից, ուստի դրա դրույթները պետք է ընկալվեն իր մեկ ամբողջականության մեջ, համաձայն 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 3բ եւ 5 հոդվածների: Այսպես նաեւ հեշտ կլինի հստակեցնել դրա դրական կամ բացասական արժեքը՝ ՀՀ եւ ԼՂՀ շահերի տեսանկյունից:

Օրինակ, բանաձեւի 1-ին կետը ասում է, որ Ադրբեջանի տարածքները շարունակում են մնալ հայկական ուժերի օկուպացիայի տակ (considerable parts of the territory of Azerbaijan are still occupied by Armenian forces), իսկ 2-րդ հոդվածը՝ որ օտարերկրյա տարածքների օկուպացիան ԵԽԽՎ անդամ-երկրի կողմից այդ երկրի ստանձնած պարտավորությունների չարամիտ խախտում է (occupation of foreign territory by a member state constitutes a grave violation of that states obligations): Մարդիկ, ովքեր ժամանակին կողմ են քվեարկել այս բանաձեւին, որպես իրենց հաղթանակ են ներկայացնում «հայկական ուժեր» տերմինը առաջին հոդվածում՝ վերագրելով դա ԼՂՀ պաշտպանության բանակին, ինչը այս փաստաթղթի ոգու հստակ խեղաթյուրում է: Մի հարց տամ՝ հապա երկրորդ հոդվածի վերոնշյալ կետը ո՞վ մեկնաբանի: Եթե սա լիներ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի փաստաթուղթ, Հայաստանը միանշանակ կճանաչվեր Ղարաբաղում «օկուպացնող ուժ» (occupying power)՝ անդառնալի հետեւանքներով: Բայց ինչպես հայտնի է, նույնիսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1993թ. չորս բանաձեւերը չեն պարունակում նման դրույթներ, հակառակ ադրբեջանական աստիճանավոր քարոզիչների պնդումների:

**- Կանգ առնենք մի կարեւոր կետի վրա. Տիգրան Թորոսյանը պնդում է, որ 1416 բանաձեւում արձանագրված է, թե Արցախը կարող է անջատվել Ադրբեջանից:**

- Այս բանաձեւում նման դրույթ պարզապես չկա: Այս պնդումը 2-րդ պարբերության խեղաթյուրված մեկնաբանություն է. եթե ուշադիր կարդանք, նախադասության երկու հատվածները բաժանվում են «and not» կապով, ինչը փոխում է նախադասության ոգին՝ դրան տալով հակադրության իմաստ, ընդ որում նախադասության առաջին մասը երկրորդի համար ունի սահմանումային նշանակություն (defining clause): Ուրախ կլինեմ բանավիճելու չհամաձայնողների հետ՝ բացահայտելու ճշմարտությունը: («Assembly reaffirms that independence and secession of a regional territory from a state may only be achieved through a lawful and peaceful process based on the democratic support of the inhabitants of such territory and not in the wake of an armed conflict leading to ethnic expulsion and the de facto annexation of such territory to another state»): Այսինքն՝ վեհաժողովը ընդունել է անկախության եւ խաղաղ ճանապարհով անջատման հնարավորությունը՝ որպես, ըստ էության, միջազգային իրավունքից բխող ընդհանուր սահմանում, բայց նույն նախադասության մեջ պնդել է, որ Արցախը անկախացել է «զինված հակամարտության արդյունքում, որի հետեւանքով եղել է էթնիկ տեղահանություն եւ այլ պետության կողմից այդ տարածքի փաստացի բռնակցում»:

Այս 1416 բանաձեւի միակ քիչ թե շատ նպաստավոր կետը, որը, սակայն, մինչ օրս չի իրագործվել՝ 9-րդ պարբերությունն է, որտեղ քաղաքական պարտավորություն է դրվում Ադրբեջանի իշխանությունների վրա՝ առանց նախապայմանների կապեր հաստատել Լեռնային Ղարաբաղի երկու համայնքների քաղաքական ներկայացուցիչների հետ (establish contacts without preconditions with the political representatives of both communities from the Nagorno-Karabakh region): 1992 թ. ԵԱՀԽ Նախարարների խորհրդի Հելսինկիի լրացուցիչ հանդիպման փաստաթղթից հայտնի է, որ այդ ներկայացուցիչները՝ Լեռնային Ղարաբաղի «ընտրված եւ այլ ներկայացուցիչներն» են: Հայտնի է, որ Ադրբեջանը 2005-ից ի վեր, երբ ընդունվել է բանաձեւը, նման քայլի չի դիմել, ավելին՝ հարստացրել է իր զինանոցը՝ ՄԱԿ-ի ԱԽ 853 բանաձեւի խախտմամբ (թերեւս այս խախտումը ընդհանուր է բոլոր երեք կողմերի համար) եւ օրեցօր ավելի ագրեսիվ է դառնում:

Քանի որ այս եւ այլ դրույթներ տարիների ընթացքում չեն իրագործվել, իսկ Ադրբեջանը, փաստորեն, տարիներ ի վեր խախտում է այս բանաձեւի կարեւորագույն դրույթներից երկուսը (4-րդ-«propagating military action» եւ 9-րդ կետերը), ըստ էության ճիշտ կլիներ, եթե Հայաստանի իշխանությունները՝ հղում անելով փոփոխված միջազգային իրականությանը, չեղյալ հայտարարեին իրենց քաղաքական հանձնառությունը այս բանաձեւի նկատմամբ, որը ժամանակին տրվել էր «կողմ» քվեով:

**- 1416 բանաձեւում նաեւ փախստականների հարցի հետ կապված հղում կա: Ի՞նչ հնարավոր լուծում կարող եք մատնանշել այս հարցում:**

- Կասկած չկա, որ ենթադրյալ միջազգային ճանաչումից հետո ԼՂՀ-ն բախվելու է ադրբեջանցի փախստականների խնդրին, եւ րոպե առաջ այս հարցի քննարկումը եւ պետական, ինչպես նաեւ հասարակական կոնսենսուսի ձեւավորումը կարեւոր մարտահրավեր է, որին մենք դեռ կարծես չենք պատասխանել: Վստահ եմ, որ ԼՂՀ իշխանությունները պետք է հենց այսօր հայտարարեն, որ պատրաստ են ընդունելու բոլոր այն փախստականներին, ովքեր ցանկություն կհայտնեն ապրելու իրենց երկրում: Այդ մարդիկ իրականում ԼՂՀ ապագա քաղաքացիներն են, եւ նրանց կյանքը Արցախում պիտի կազմակերպվի այլ քաղաքացիների հետ հավասար պայմաններով՝ նրանք պետք է հարգեն ԼՂՀ սահմանադրությունը եւ օրենքները, իսկ խախտելու դեպքում՝ կրեն օրենքով նախատեսված պատասխանատվություն: Ըստ էության, այսօր ոչինչ չի խանգարում ԼՂՀ իշխանություններին՝ աշխատելու իրենց ապագա քաղաքացիների հետ, ասենք՝ պաշտոնական կայքերում (եթե հաշվի առնենք, որ ցամաքային կապ չկա) տեղադրվեն հայրենադարձության ձեւաթղթեր: Ես հասկանում եմ, որ այս միտքը շատերի մոտ տարակուսանք կարող է առաջացնել, բայց էմոցիաները մի կողմ դնելով պետք է փաստել, որ փախստականների վերադարձը միջազգային իրավունքի պահանջն է, եւ կասկած չկա, որ բոլորիս նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը տեսնել իրավական պետություն, որը կհետեւի միջազգային կանոններին եւ կունենա միջազգային իրավական պատասխանատվություն: Ես մի միտք եմ առաջարկում, որին հիմնավորված՝ դրական կամ բացասական պատասխան Ղարաբաղի իշխանությունները դեռեւս չեն ձեւակերպել:

Հարցազրույցը վարեց
ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ

# Վեհափառ հայրապետն ընդունել է հանրակրթական դպրոցի տնօրեններին

**Երեկ Մայր աթոռ Սբ Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ընդունել է հանրապետության տարբեր մարզերից ժամանած հանրակրթական 32 դպրոցների տնօրեններին: Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան աբեղա Նավասարդյանը ներկայացրել է տնօրեններին, որոնք Մայր աթոռ էին եկել հաղորդակցվելու Ս. Վարդանանց տոնին, ստանալու նաեւ Վեհափառի օրհնությունը: Վարդանանց տոնը նաեւ Նորին սրբության անվանակոչության օրն է եւ այդ առիթով հայր Վարդանը ամենքի անունից շնորհավորել է Ամենայն հայոց հայրապետին: Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունն ու պատգամն է հղել կաթողիկոսը: Բարձր գնահատելով դպրոցի դերը, մատաղ սերնդին ճիշտ կրթելու եւ դաստիարակելու կարեւոր գործին իրենց լուման ներդրող տնօրենների քրտնաջան ամենօրյա աշխատանքը, Վեհափառ հայրապետը հորդորել է տնօրեններին կրթել ու դաստիարակել հայորդիներին Վարդանանց նույն նվիրական արժեքներով, սրբազան գաղափարներով՝ «վասն հայրենյաց եւ վասն հավատոյ»:**



**Հանդիպումից հետո տնօրենները Մայր տաճարում մասնակցել են պատարագին, ներկա եղել տոնին նվիրված գեղարվեստական ցերեկույթին եւ այցելել եկեղեցու թանգարանները:**
**Մ. Մ.**

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Հայ-հնդկական հարաբերությունները զարգացման մեծ ներուժ ունեն

**Հնդկաստանի Հանրապետության Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Շիվ Շանկար Մենոնի հրավերով Նյու Դելիում գտնվող Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը մարտի 2-ին հանդիպումներ է ունեցել Հնդկաստանի արտաքին գործերի, պաշտպանության, հեռահաղորդակցության ու տեղեկատվական տեխնոլոգիաների գերատեսչություններում: Արտաքին գերատեսչության ղեկավար, պետնախարար Ի. Ահամեդի, Արեւելքի հարցերով պետքարտուղար Վիջայա Լաթթա Ռեդիի հետ քննարկվել են հայ-հնդկական հարաբերությունների զարգացման խնդիրները: Երկուստեք նշվել է, որ հայ-հնդկական բարեկամական հարաբերությունները զարգացման մեծ ներուժ ունեն: Կողմերը կարեւորել են միջազգային կազմակերպություններում միմյանց դիրքորոշումները հարգելու եւ պաշտպանելու ձեւավորված պրակտիկան եւ պայմանավորվել են խորացնել երկկողմ քաղաքական երկխոսությունը՝ ներառելով նաեւ անվտանգության, տնտեսության ոլորտները: Այս առումով կարեւորվել է հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի գործունեության ակտիվացումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին երեք տարվա ընթացքում չի գումարվել որեւէ նիստ: Ի թիվս այլ հարցերի պայմանավորվածություն է ձեռք բերվել այս տարի Երեւանում անցկացնել հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը, ջանքեր գործադրել երկկողմ ապրանքաշրջանառության ծավալների մեծացման ուղղությամբ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել հայկական «Նաիրիտ» եւ «Քիմպրոմ» ձեռնարկությունների եւ հնդկական համապատասխան ձեռնարկությունների գործակցության խնդիրներին:**




**Ռազմական գերատեսչության ղեկավար, պետնախարար Պալլամ Ռաջուի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանության ոլորտում համագործակցության խորացման խնդիրները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել երկուստեք քայլեր ձեռնարկել՝ խորացնելու ռազմատեխնիկական համագործակցությունը, օգտագործելու ռազմական կրթական համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը: Արթուր Բաղդասարյանը Պալլամ Ռաջուին հրավիրել է Հայաստան, հրավերը սիրով ընդունվել է:**

**Օրվա հանդիպումների շարքը եզրափակվել է Հնդկաստանի պաշտպանական հետազոտությունների եւ վերլուծությունների ինստիտուտում կայացած հանդիպմամբ, որին մասնակցել են Հնդկաստանի անվտանգության, պաշտպանության եւ արտաքին քաղաքականության ոլորտի փորձագետներ եւ պատասխանատուներ: Ինստիտուտի գլխավոր տնօրեն Նարենդրա Սիսոդիան ներկայացրել է հաստատության գործունեության հիմնական ուղղությունները եւ հեռանկարային ծրագրերը: Արթուր Բաղդասարյանը հնդկական կողմի խնդրանքով տեղեկատվություն է տրամադրել Հայաստանի արտաքին քաղաքական գերակայությունների, իրականացվող ծրագրերի, գործող հետազոտական հաստատությունների ինչպես նաեւ՝ Ազգային անվտանգության խորհրդի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:**

**Հանդիպման ընթացքում Արթուր Բաղդասարյանը պատասխանել է հնդիկ փորձագետների հարցերին:**

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

# Հայաստանը մասնակցում է Ռելյատիվիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոնի աշխատանքներին

Փետրվարի 21-22-ին Իտալիայի Պեսկարա քաղաքում տեղի ունեցավ Ռելյատիվիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոնի կառավարող կոմիտեի հերթական նիստը, որը քննարկեց մեկ տարվա աշխատանքների արդյունքներն ու ընթացիկ տարվա բյուջեն: Կենտրոնը մասնաճյուղ ունի նաեւ Հայաստանում, եւ կոմիտեի նիստին մասնակցում էր ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը: Առավել կարեւոր ձեռքբերումներից մեկը կապված էր եվրոպական համալսարաններում այդ կենտրոնի միջոցով տարբեր երկրներից եկած երիտասարդների հետհամալսարանական կրթության, ինչպես նաեւ տարբեր երկրներում մի շարք գիտաժողովների կազմակերպմանը: Որպես կարեւոր ձեռքբերում նշվեց նաեւ, որ Իտալիայի խորհրդարանը միաձայն որոշում է կայացրել կենտրոնի միջազգային կարգավիճակը վավերացնելու՝ դրանից բխող բոլոր առավելությունների տրամադրմամբ: Ինչպես հայտնի է, Իտալիայի եւ Վատիկանի հետ այդ կենտրոնի հիմնադիր անդամ է Հայաստանը, իսկ հետագայում մասնակից երկրներին է միացել նաեւ Բրազիլիան: Ներկայումս աշխատանքներ են կատարվում Հայաստանի եւ Բրազիլիայի մասնաճյուղերի զարգացման համար: Ինչպես նշված է կառավարող կոմիտեի այս տարվա արձանագրության մեջ, Հայաստանի մասնաճյուղը ռազմավարական նշանակություն ունի կենտրոնը Մերձավոր Արեւելքի եւ Միջին Ասիայի երկրների հետ կապելու համար: Կոմիտեի նիստի որոշմամբ կենտրոնի տնօրենը նամակներ է ուղղել Հայաստանի եւ Բրազիլիայի համապատասխան գերատեսչություններին՝ այդ երկրների մասնաճյուղերի միջազգային կարգավիճակին նույնպես խորհրդարանական վավերացում տալու մասին:

ԱԶԳ

# ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԵՆՔ

# Արամ քահանա Միրզոյան. «Տարածաշրջանում գործող եկեղեցիներ շատ պիտի լինեն»

***Տարիներ առաջ, երբ Հայ եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի ներկայիս առաջնորդ Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը նոր-նոր հոգեւոր հովիվ էր նշանակվել Սանկտ Պետերբուրգում, մի առիթով դառնությամբ ասաց, որ հայտնվել է հոգեւոր... խոպանում. տարածաշրջանում բացակայում էր ե՛ւ ազգային, ե՛ւ կրոնական կյանքը: Ես այս պատմությունը վերհիշեցի, երբ զրուցում էի Տավուշի մարզի Բերդ քաղաքի եւ տարածաշրջանի (նախկին Շամշադինի շրջանի) հոգեւոր հովիվ արժանապատիվ տեր Արամ քահանա Միրզոյանի հետ: Զրույցն անբռնազբոսիկ էր, քանզի երկուսս էլ արմատներով շամշադինցի ենք եւ լավ գիտենք տեղացիների սովորույթները, բարքերը, նիստուկացը:***

**- Տեր հայր, Էջմիածնից վերադառնալով փոքր հայրենիք՝ Դուք չբախվեցի՞ք նույն հոգեւոր խոպանին (ազգային գործոնը մի կողմ դնենք):**

- Սրբազան հոր խոսքերը չափազանց մեղմ են ասված, այստեղ ավելի խիստ բնորոշումներ կարելի էր լսել, որոնց հեղինակները հենց իրենք՝ տեղացիներն էին: Համատարած աստվածամերժության 70 ձիգ տարիներն իրենց սեւ գործն էին արել: Նշված ժամանակաշրջանում Շամշադինի տարածքում ոչ մի գործող եկեղեցի չի եղել, բնականաբար չեն եղել նաեւ հոգեւորականներ, հոգեւոր կյանքի բացակայությունը բացասաբար է ազդել տեղացիների հոգեկերտվածքի եւ ճշմարիտ կրոնի նկատմամբ ունեցած պատկերացումների վրա:

**- Հիշում եմ, դպրոցական երեխաներ էինք, էքսկուրսիա էինք գնացել Էջմիածին եւ զարմանքով էինք նայում յուրօրինակ «համազգեստով» մարդկանց, կյանքում առաջին անգամ էինք տեսնում:**

- Այդուհանդերձ, համաձայն չեմ այն մտքին, թե իբր շամշադինցիներն անհավատ են: Անհավատ մարդիկ չեն կարող պաշտպանել Ադրբեջանի հետ Հայաստանի ունեցած սահմանի ամենամեծ հատվածը՝ 182 կիլոմետր: Եվ հետո, բոլշեւիկյան հիրավի բարբարոսական զանգվածային եկեղեցաքանդությունից հետո էլ տեղացիները պահպանել են հոյակերտ կոթողներ, որոնք իրենց սուրբ առաքելությամբ դեռ պիտի ծառայեն տեղացիներին: Վերոնշյալի ամենախոսուն վկաներից են 12-րդ դարի հրաշքները՝ Սուրբ Նոր Վարագավանքը եւ Սուրբ Խորանաշատը: Երազանքս է տեսնել նրանց վերակառուցված եւ երբեմնի փառքով:

**- Այս պայմաններում Ձեր գործունեությունը հենց սկզբից հա՞րթ ընթացավ:**

- Ոչ, իհարկե: Երբ առաջին անգամ ի պաշտոնե եկա Տավուշ գյուղը՝ տեղի եկեղեցին գործող դարձնելու մտադրությամբ, բախվեցի գյուղացիների անտարբերությանը, ինչ-որ տեղ՝ ագրեսիվ:

**- Երեւի՝ «ջահել տղա ես, գնա գործ գտիր քեզ համար»:**

- Մոտավորապես այդպես, նրանց մեջ արմատացել էր այն գիտակցությունը, թե «մենք ուր, հոգեւորականն ուր»: Ասացի, որ ես էլ այս հողի, ջրի, օդի զավակն եմ եւ եկել եմ ձեզ տալու այն, որ կա իմ հոգում: Մեղմացան, խաղաղվեցին: Ի դեպ, շնորհապարտ եմ Հայոց հայրապետին, որ իմաստնաբար այստեղ ուղարկեց տեղացուս. ներքին կյանքի իմացությունը շատ է դյուրացնում հոգեւոր առաքելության իրականացումը: Մեր լեռնաշխարհի մարդկանց յուրահատկություններից մեկն այն է, որ նրանք ունակ են լսելու դիմացինին, ուշադիր են ճշմարիտ խոսքի նկատմամբ. ունկնդրում են, խորհում, հասկանում, հետեւություն անում:



**- Այո, հասակող չէ մեր ժողովուրդը: Տեր հայր, մենք հանդիպել ենք տխուր իրողության՝ մորս թաղումից հետո, որի հետ կապված բոլոր արարողությունները վստահել էինք ձեզ: Ինձ համար եւ առհասարակ բոլոր հուղարկավորողների համար անակնկալ շատ բան եղավ: Զգուշացնելով, որ թաղումը ժողովրդական արարողություն չէ, այլ կրոնական, Դուք շատ առումներով փոխեցիք արարողակարգը, որը, կրկնում եմ, շատերի համար նորություն էր. արգելեցիք դագաղի եռապտույտը կամ վայրիվերումները, բաժակով օղին կիսով չափ դատարկելուց հետո մնացածը թարմ գերեզմանի վրա թափելը, հոգեհացի սահմանափակումը 30-40 րոպեով եւ այլն: Աշխարհականացված թաղումներին սովոր տեղացիները ընդունո՞ւմ են իրենց համար անսովոր նման «նորամուծությունները»:**

- Ես փորձում եմ շատ կտրուկ չլինել: Հոգեւորականի ամենահզոր զենքը, աղոթքից հետո, հանդարտությունն ու դիմացինին լսելու կարողությունն է: Փորձում եմ համբերատար բացատրել, պարզաբանել ու հետո միայն անցնում եմ հոգեւոր պարտականություններիս կատարմանը: Գիտե՞ք, եկեղեցականի բացակայության պայմաններում մարդիկ ներքին պահանջով թե բնազդով ննջեցյալին այն աշխարհ ճանապարհելուց հետո խորհուրդներ են փնտրել անդրաշխարհյան կյանքում եւ միշտ չէ, որ ճիշտ են կողմնորոշվել իրենց պատկերացումներում: Ես, օրինակ, սրբապղծություն եմ համարում ձեր հիշատակած՝ օղու մնացորդի «հանդիսավոր» նետումը շիրմի վրա: Դրա մեջ ոչ մի խորհուրդ, տրամաբանական բացատրություն չկա: Կամ՝ ինչո՞ւ բահով խաչակնքել գերեզմանը, երբ ներկա է օծված խաչով քահանան: Տարրական բան՝ ինչո՞ւ դղրդալով հողը լցնել հենց դագաղի վրա, երբ կարելի է սկսել կողքերից: Դառնանք հոգեհացի արարողությանը. չի՞ անարգվում արդյոք հանգուցյալի հիշատակը, երբ այն վերածվում է տեւական կերուխումի՝ անվերջ բաժակաճառերով: Սեղանը պետք է լինի համեստ, որ չունեւորը թերարժեքության բարդույթ չապրի, չխրվի անհարկի պարտքերի մեջ: Ես ձգտում եմ մարդկանց հեռու պահել ցուցամոլությունից՝ լինի դա թաղման ժամանակ, թե շքեղ դամբարաններ կառուցելիս: «Պարտական եղիր հորդ, մորդ, մերձավորիդ նրա կենդանության օրոք»: Հավատացեք, այս եւ նման հարցերի իմ պարզաբանումները նրանց կողմից դրականորեն են ընկալվում:



**- Տեր հայր, կուզենայի շոշափել Հայ եկեղեցու համար թերեւս հիվանդագին՝ աղանդների հարցը: Ապրելով Մոսկվայում, մտքովս անգամ չէր անցնում, որ «աշխարհից հեռու» մեր երկրամասում կարող են աղանդավորներ լինել: Բայց անողոք փաստ է, որ զանազան եհովականներ, հոգեգալստականներ եւ չգիտեմ էլ ինչ «ականներ» բույն են դրել մեր հողում: Խնդիրը թերեւս ոչ այնքան կրոնական է, որքան քաղաքական. կան համաշխարհային հզոր ուժեր, որոնց ձեռնտու է ժողովուրդների տարանջատվածությունը, այդ թվում նաեւ կրոնական հողի վրա՝ հեշտ է նրանց կառավարելը: Նույն երեւույթն է նկատվում նաեւ Ռուսաստանում: Եթե այդ մոլորյալներին ասես, որ նրանք զոհ են գլոբալ խարդավանքի, ապա չեն հասկանա, զարմացած կնայեն քեզ: Գաղտնիք չէ նաեւ, որ նրանց պարագլուխներն ու «ակտիվիստները» ֆինանսավորում են դրսից: Ինչպե՞ս եք դիմակայում դրանց:**

- Աղանդները մեր տարածաշրջանում արդեն տարածվել էին մինչեւ իմ նշանակումը: Մարդիկ կարոտ են եղել աղոթքի, եւ զանազան էմիսարներ, օգտվելով հոգեւոր վակուումից, հասցրել էին մարդկանց մի հատվածի կտրել մեր ավանդական եկեղեցուց: Անձամբ ինձ մեծ ցավ է պատճառում այս պարագան: Շամշադինցին՝ աղանդավո՞ր: Ցավոք, աղանդն ընդունած անձինք խիստ զոմբիացված են, եւ շատ դժվար է նրանց վերահավատափոխման գործը: Շատ հաճախ հետեւանքները ողբերգական ավարտ են ունենում. աղանդավորական ծնողը թույլ չի տալիս վիրահատել իր երեխային, եւ նա մահանում է կույր աղիքի բորբոքումից: Երիտասարդ տղան հրաժարվում է զինվորական ծառայությունից, նույնիսկ՝ այլընտրանքայինից, գերադասելով բանտը: Մինչդեռ աղանդների «առաջնորդները» իրենք բուժվում են թանկարժեք կլինիկաներում, ապրում են ըստ պահանջի, այդ թվում նաեւ իրենց չքավոր հպատակների հաշվին:

Ելքը մեկն է՝ մեր ուժեղացումը, հավատը մեր նկատմամբ: Այս հարցում կարեւոր է, որ տարածաշրջանում գործող եկեղեցիներ շատ լինեն: Պետք է ասեմ, որ տեղական իշխանությունները օրենքի սահմաններում սատար են կանգնում ինձ բոլոր տեսակի հարցերում:

**- Ի դեպ, ինչո՞ւ չի սկսվում Բերդի եկեղեցու շինարարությունը, կա նախագիծ, հատկացված է հողամաս, նույնիսկ վերամբարձ կռունկ է բարձրացել, բայց տեղաշարժ չի նկատվում:**

- Շինաշխատանքները ձգձգվել են սուբյեկտիվ պատճառներով: Կարեւորը՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը հատկացրել է հիմնական գումարը, պակասում է մոտ 100 հազար դոլար, որը, հուսով ենք, մեզ կտրամադրեն ազնիվ հայորդիք՝ բարերարներ ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի հայկական գաղթօջախներից, ուր հանգրվանել են զգալի թվով շամշադինցիներ: Հիմքեր կան ասելու, որ մարտ-ապրիլ ամիսներին ձեռնամուխ կլինենք կառուցման աշխատանքներին:

**- Դժվա՞ր չէ Ձեզ համար՝ Բերդ քաղաք, 16 գյուղ եւ միայն մեկ հոգեւոր հովիվ:**

- Դժվար է, բայց առաքելություն եմ ստանձնել եւ սիրով եմ կատարում, չէ՞ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասել է. «Իմ լուծը քաղցր է եւ իմ բեռը՝ թեթեւ»:

Բարեբախտաբար համալրման հույս ունենք: Իմ օրինակով արդեն կան երիտասարդ շամշադինցիներ, որ ուսանում են Սուրբ Էջմիածնի ճեմարանում…

**Հարցազրույցը վարեց**
**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**
**Մոսկվա-Բերդ**

---

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

# Գուրգեն Պողոսի Սարգսյան

*(1918-2011)*



**2011 թվականի փետրվարի 20-ին, 93 տարեկան հասակում, Լոս Անջելես քաղաքում իր մահկանացուն կնքեց բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայրենանվեր գործիչ Գուրգեն Պողոսի Սարգսյանը:**

**Գուրգեն Պողոսի Սարգսյանը ծնվել է 1918 թվականին Պարսկաստանի Սավրա գյուղում՝ Մեծ եղեռնը վերապրած եւ գաղթի ճանապարհին երեք զավակներին կորցրած Պողոս եւ Խաթուն Սարգսյանների ընտանիքում: Նույն՝ 1918 թվականին Սարգսյանների ընտանիքը Պարսկաստան գաղթած վասպուրականցիների հետ տեղափոխվում է Իրաք, հաստատվում Բաքուբա գյուղաքաղաքի բնակավայրերից մեկում: Գուրգենը գրաճանաչություն է սովորում տեղի հայկական եկեղեցուն կից բացված նախակրթարանում, այնուհետեւ սովորում է Բաղդադի ամերիկյան միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում անգլիական նավթային ընկերություններում:**

**1946 թվականին Գուրգեն Սարգսյանը հայրենադարձների առաջին շարքերում ներգաղթում է Խորհրդային Հայաստան: Նա իր հետ հայրենիք է բերում մորը եւ երկու եղբայրներին: Երեւանում Գուրգենը սովորում է պետական համալսարանի հայկական բանասիրական ֆակուլտետում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Երեւանի միջնակարգ դպրոցներում, իսկ 1961 թվականից՝ որպես անգլերեն լեզվի դասախոս պոլիտեխնիկական ինստիտուտում: Այստեղ էլ պաշտպանում է գիտական թեկնածուական թեզ եւ ստանում դոցենտի գիտական կոչում:**

**Հանգամանքների բերումով Գուրգեն Սարգսյանը 1991 թվականին մշտական բնակության է մեկնում Միացյալ Նահանգներ եւ հաստատվում դստեր՝ Ծովինարի ընտանիքի կողքին:**

**Շուրջ քսան տարի Գուրգեն Պողոսյանը ապրում է Հոլիվուդում. նա ոչ թե ծերունական հանգիստ էր վայելում, այլ անխոնջ աշխատում էր եւ հայրենանվեր գործեր ձեռնարկում: 1973 թվականին լույս էր տեսել նրա «Մարաթոնյան վազք» աշխատությունը, իսկ 1993 թվականին լույս է տեսնում «Օլիմպիական խաղերի ատլետիկական մրցումների պատմությունը» գիրքը: 1995 թվականին Գուրգեն Սարգսյանի թարգմանությամբ հրատարակվում է Հենրի Գեյթսի «Հոշոտված Հայաստան» (կամ «Հոգիների աճուրդը») վեպը: 1996 թվականին նա հրատարակում է «Անգլերենից փոխառնված բառերն ու տերմինները արդի հայերենում» աշխատությունը, 1999-ին լույս է տեսնում «Նոր արեւապաշտներ» պատմվածքների ժողովածուն, իսկ 2002 թվականին «Ուղղագրության բարեփոխությունը պատմական անհրաժեշտություն էր» ուսումնասիրությունը: Նրա թարգմանությամբ 2003 թվականին լույս է տեսնում Էդուարդ Լիթլի «Հայկական հարցը» գրքույկը, նույն թվականին հրատարակվում է «Գրական հույզեր» գրաքննադատական, իսկ 2005 թվականին՝ «Հին ու նոր ցավեր» պատմվածքների ժողովածուները:**

**Իր ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյից հետո Գուրգեն Սարգսյանի սիրտը տեղի է տալիս, սակայն բժիշկների կանխատեսմանը հակառակ՝ նա ապրում է եւս երեք տարի, ապրում է միանգամայն լեցուն կյանքով՝ անգլերենից հայերեն թարգմանելով Ստալինգրադյան ճակատամարտին նվիրված 400-էջանոց ծավալուն ստեղծագործությունը: Գրքի ձեռագիրը պատրաստ է տպագրության: Անավարտ է մնացել իր լավ բարեկամ, աստղագետ, ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատությունը:**

**Հանգուցյալի ցանկությամբ՝ նրա աճյունը երկար ճանապարհ է կտրել. Լոս Անջելեսից տեղափոխվել է Երեւան, որպեսզի մշտական հանգրվան գտնի հայրենի հողում՝ իր տիկնոջ կողքին:**

# «Թուրքիան օկուպանտ է, թող ռադ լինի Կիպրոսից»

## *Այս կարգախոսով կիպրացի թուրքերը նոր հանրահավաք են կազմակերպել Նիկոսիայի թուրքական հատվածում*

Հունվարի 28-ին «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունում» «Արհմիությունների պլատֆորմի» նախաձեռնությամբ կազմակերպվել էր «Հասարակական գոյատեւման» առաջին հանրահավաքը, որտեղ կիպրացի թուրքերը բարձրացրած ցուցապաստառներով Թուրքիային հայհոյել եւ վիրավորել էին: Դրան վարչապետ Էրդողանի գլխավորությամբ Թուրքիայի ղեկավարների հակազդեցությունը եւ դրան հակադիր կողմի արձագանք, տեղիք տալով անախորժ բանավեճերի, սրել էր Կիպրոսի թուրքական հատվածի հարաբերությունները Թուրքիայի հետ:

**«Ազգը»** նախորդ համարներում, արծարծելով այս հարցը, միաժամանակ տեղեկացրել էր Կիպրոսի թուրքական հատվածում «Արհմիությունների պլատֆորմի» տարածած հաղորդագրության մասին, ըստ որի՝ «Հասարակական գոյատեւման» երկրորդ հանրահավաքը նախատեսվում էր մարտի 2-ին: Հիրավի, այդ օրը Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայի թուրքական հատվածում հազարավոր կիպրացի թուրքեր մասնակցել են համատարած գործադուլով ուղեկցվող երկրորդ հանրահավաքին: Թեեւ տեղի մամուլը մասնակիցների թիվը չի նշում, սակայն ընդգծում է, որ հանրահավաքին բարձրացված ցուցապաստառների թիվը շուրջ 5 հազար է եղել, որոնք բացի Թուրքիայից, ուղղվել են նաեւ վարչապետ Էրդողանի դեմ:

Հատկանշական է, որ «Արհմիությունների պլատֆորմի» կոչին արձագանքել են նաեւ թուրքական հատվածի քաղաքական կուսակցությունները, ընդ որում՝ այնպիսի մակագրությամբ ցուցապաստառներով, ինչպիսիք են. «Ուզում ենք դառնալ մեր տան տերը», «Մենք ենք մեր տան տերը», «Ըմբոստանում ենք, որովհետեւ արդարություն ենք ուզում», «Բավ է», «Եղել ենք, կանք ու կլինենք», «Կիպրոսի, Թուրքիայի եւ Հունաստանի ժողովուրդները եղբայրներ են»: Հանրահավաքին մասնակցել են նաեւ կիպրացի հույները, ինչպես նաեւ «Ազատություն եւ համերաշխություն» կուսակցության պատվիրակությունը Թուրքիայից:

«Ենի հավատիս» կիպրական թերթի վկայությամբ, հանրահավաքի վայրում արտակարգ միջոցառումներ իրականացրած ոստիկանությունը արգելել է «Թող ռադ լինի օկուպանտ Թուրքիայի Հանրապետությունը» մակագրությամբ ցուցապաստառ կրող բողոքարարների մուտքը հրապարակ: Վերջիններս դիմադրել են, որի հետեւանքով քաշքշուկ է առաջացել նրանց միջեւ:

Ստորեւ ներկայացնում ենք Թուրքիայի նկատմամբ կիպրացի թուրքերի դիրքորոշման առումով առավել հետաքրքրություն ներկայացնող ցուցապաստառների մակագրությունը:

«Մենք Կիպրոսի Հանրապետությունում իրավունքներ ունենք, ինքնություն եւ անձնագիր՝ նմանապես, փող էլ ունեինք, բայց Թուրքիան գողացավ», «Անկարա, ձեռքդ քաշիր մեր կոկորդից», «Տո դու ով էլ որ լինես (խոսքը վարչապետ Էրդողանի մասին է), մեզ ոչնչացնել չես կարող», «Թուրքիան օկուպանտ է», «Պաղեստինի եմ նման. մի հատվածս օկուպացված է, իսկ մյուսը՝ «գոյատեւման» պայքարի մեջ», «Կիպրոսը ոչ թուրքերինն է, ոչ՝ հույներինը, ո՛չ էլ՝ անգլիացիներինը, Կիպրոսը կիպրացի ժողովրդինն է», «Ո՛չ օկուպացիային, ասիմիլյացիային ու գաղութատիրական կարգերին», «Թուրքիան մեզ ոչ թե կերակրվելու գումար, այլ օկուպացման վարձն է վճարում»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԹԵԺ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Հ. Քլինթոն. «Իրանը միջամտում է արաբական երկրների իրադարձություններին»

## *Չավես-Քադդաֆի շփումներ*



**Կոնգրեսում ելույթ ունենալով՝ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հայտարարել է, որ Իրանի իշխանությունները ձգտում են ուժեղացնել իրենց ազդեցությունը անհանգիստ արաբական պետություններում:**

**Նրա խոսքերով, Թեհրանի վարչակարգը ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջամտում է Եգիպտոսի, Բահրեյնի եւ Եմենի իրադարձություններին: Եգիպտոսի ընդդիմության հետ իրանցիները կապ են հաստատել շիա լիբանանցիների «Հզբոլլահ» կազմակերպության եւ պաղեստինյան «Համաս» խմբավորման շարքերում իրենց ներդրած գործակալների միջոցով: Ռոյթեր գործակալությունը մեջբերում է Քլինթոնի այն խոսքերը, որ Իրանն ակտիվորեն միջամտում է Բահրեյնի գործերին, որտեղ շիաները մեծամասնություն են կազմում, եւ Եմենի գործերին, որտեղ շիաները զգալի թիվ են կազմում:**

**Թեհրանի հարաճուն ազդեցությանը դիմակայելու նպատակով Վաշինգտոնն իր հերթին կապեր է պահպանում արաբական երկրների ընդդիմադիր ուժերի հետ: Հ. Քլինթոնի խոսքերով, դա շատ բարդ խնդիր է, քանի որ մերձավորարեւելյան շրջանակները մեծ մասամբ ուզում են օգնություն ստանալ ԱՄՆ-ից, բայց դեմ են ամերիկացիների լուրջ միջամտությանը:**

**Լիբիայի դեպքերի կապակցությամբ Քլինթոնն ընդգծել է, որ ռազմական միջամտությունը կարող է ունենալ բացասական հետեւանքներ, ուստի առայժմ դժվար է արգելքի գոտի սահմանել ապստամբներին ռմբակոծող լիբիական ռազմօդանավերի թռիչքների համար: Պետքարտուղարի խոսքերով, ամենամեծ վտանգն այն է, որ Լիբիան կարող է դառնալ մի «վիթխարի Սոմալի»:**

**Վենեսուելայի տեղեկատվության նախարար Անդրես Իզառան իր հերթին «Թվիտեր» ցանցի միջոցով հայտարարել է նախագահ Ուգո Չավեսի եւ Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիի շփումների մասին: Երկու նախագահները քննարկել են Լիբիայի իրադրության կարգավորմանը միջնորդելու նպատակով խաղաղարար խումբ ստեղծել հնարավորությունը: Նախարարը չի մանրամասնել, թե ինչ եղանակով են հաղորդակցվել երկու նախագահները:**

# «Մենք ինքնավար Քուրդիստանը կառուցելու ենք համառ դիմադրությամբ եւ անձնուրաց պայքարով»

## *Հայտարարում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավոր տիկ. Քըշանաքը*

**Թեեւ արաբական երկրների օրինակով զանգվածային խռովությունները Թուրքիային չեն սպառնում, սակայն երկրում հետզհետե սրվում է քրդական հարցը: Այդ ընթացքում նոր բնույթ է ձեռք բերում քրդերի սահմանադրական իրավունքների համար պայքարը, որի առաջամարտիկներից է Թուրքիայի ազգային ժողովում 21 պատգամավոր, հետեւաբար եւ խմբակցություն ունեցող «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը:**

**Ինչպես մարտի 2-ին նշել են թուրքական լրատվական գործակալությունները, նույն օրը մասնակցելով Շըրնաքի Սիլոփի գավառում «Ազատ կանանց ժողովրդավարական շարժման» նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառմանը, «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության համանախագահ տիկ. Գյուլթեն Քըշանաքը ելույթ է ունեցել, զգուշացնելով Թուրքիայի ղեկավարներին: Նա խոսքն ուղղելով Ռեջեփ Թայիփ Էրդողանին, ասել է. «Այս վարչապետը Անկարայում նստած 8 տարի շարունակ վայելում է պաշտոնի բարիքները: Ոչ մի ջանք չի խնայում, որ ձախողի հաշտեցման մեր ջանքերը: Ամեն ինչ արեցին, որպեսզի ձախողվի PKK-ի միակողմանի հայտարարած զինադադարը: Եվ երեկ PKK-ի քաղաքային կազմակերպությունը՝ KCK-ը նոր հայտարարություն արեց եւ ասաց, որ այլեւս անիմաստ է շարունակել զինադադարի ռեժիմը: Հետայսու արյան յուրաքանչյուր կաթիլի պատասխանատուն Էրդողանն է լինելու: Ամեն մի սպանության համար նմանապես: Փոխվարչապետ Ջեմիլ Չիչեքն ասում է. «Մենք չենք սակարկում»: Ռադդ քաշիր: Դու ո՞վ ես, որ մեզ հետ սակարկես: Մենք մեր իրավունքները ստանալու ենք համառ դիմադրությամբ, անձնուրաց պայքարով եւ սլանալով դեպի անկախություն, ինքնավար ժողովրդական Քուրդիստանն ենք կառուցելու: Դու, Ջեմիլ Չիչեք, ի՞նչ ես քեզանից ներկայացնում, որ փորձում ես կանգնեցնել մեր ընթացքը: Երկրում օրական 5 կին բռնության զոհ է դառնում: Կանայք ամեն օր ենթարկվում են սեռական ոտնձգության, հալածանքների: Ո՞ւր է ձեր պետությունը կամ ո՞րն է քաղաքացիների կյանքի անվտանգության ձեր ըմբռնումը: Բոլոր հարցերը թողած, կենտրոնացել են մեր պայքարի վրա: Շրջանում (քրդաբնակ) իրավիճակը պայթյունավտանգ է, կարող է ամեն պահի պայթել: Սա սպառնալիք չէ, այլ իրողություն: Պատասխանատվությունն ընկնում է կառավարության վրա»:**

**Տիկ. Քըշանաքին ելույթով հավելել է «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության մյուս փոխնախագահ Սելահաթդին Դեմիրթաշը, ընդգծելով. «Իրավիճակը ծայրահեղ լարված է: Մի կայծով կարող է պայթել: Չի բացառվում, որ ժողովուրդը (քուրդ) դուրս գա փողոց եւ ինքը լուծում առաջադրի, ինչպես Թունիսում եւ Եգիպտոսում առաջադրեց»:**

Հ. Չ.

# Հեղափոխության վիրուս նաեւ Խորվաթիայում

**Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում երեկ եւ անցյալ օրը տեղի են ունեցել հակակառավարական բազմամարդ ցույցեր: Դրանց մասնակիցները պահանջում էին պահպանողական վարչապետ Յադրանկա Կոսորի հրաժարականը: РБК կայքը հաղորդում է, որ ոստիկանության հետ բախումներ չեն արձանագրվել:**

**Ցուցարարներն այրել են Եվրոմիության դրոշը (Խորվաթիան ուզում է դառնալ ԵՄ անդամ), ինչպես նաեւ գլխավոր ընդդիմադիր ուժի՝ Սոցիալիստական կուսակցության դրոշը: Նրանք նաեւ պատառոտել են «Խորվաթական դեմոկրատական ընկերակցության» կառավարող խմբակցության դրոշը:**

**Հանրահավաքներ են անցկացվել երկրի Ռիեկա, Սպլիտ, Զյակով քաղաքներում: France24 հեռուստաալիքը հաղորդում է, որ ցուցարարների**



**մեծ մասը երիտասարդներ են, որոնք բողոքում են կաշառասուն վարչակարգի դեմ, պահանջելով կառավարության հրաժարականը:**

# 22 նոր մեղադրանք WikiLeaks-ի իրազեկիչ Մենինգին



**ԱՄՆ բանակը 22 նոր մեղադրանք է ներկայացրել շարքային Բրեդլի Մենինգին, որին կասկածում են WikiLeaks կայքին գաղտնի փաստաթղթեր փոխանցելու մեջ: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Մենինգին մեղադրում են բանակային համակարգիչներում արգելված ծրագրեր օգտագործելու, անօրինական բեռնավորում կատարելու եւ տվյալները ԱՄՆ-ի «թշնամիներին» փոխանցելու մեջ: Բանակում իրավական հարաբերությունները կանոնակարգող օրենսգրքի իրավադատությանը ենթակա զինվորին նման մեղադրանք ներկայացնելը ենթադրում է մահապատիժ, սակայն բանակի ներկայացուցիչները Մենինգի փաստաբաններին ծանուցել են, որ դատարանում չեն պահանջելու առավելագույն պատժաչափ:**

**Մեղադրանքների բոլոր նոր կետերով մեղավոր ճանաչվելու դեպքում Բրեդլի Մենինգին սպառնում են ցմահ բանտարկություն եւ արտաքսում բանակից՝ զրկելով իրավունքներից եւ արտոնություններից:**

**Ավելի վաղ Մենինգը մեղադրվել էր գաղտնի տեղեկությունների հրապարակման, մասնավորապես WikiLeaks-ին Բաղդադի 2007 թ. այն տեսագրության փոխանցման համար, որտեղ ուղղաթիռից գնդակոծվում են մի խումբ մարդիկ, մասնավորապես Ռոյթեր գործակալության երկու աշխատակիցներ: Այն ժամանակ սպանվել էր 18 մարդ, այդ թվում՝ երկու լրագրողները:**

**Ենթադրվում է, որ նախքան կալանավորվելը (2010-ի մայիս) հենց Բրեդլի Մենինգն է WikiLeaks-ին փոխանցել ամերիկացի դիվանագետների 250 հազար հեռագրեր, որոնց հրապարակումը սկսվեց նոյեմբերի վերջերին:**

**23-ամյա Մենինգին պահում են Վիրջինիայում գտնվող ռազմակայանի բանտում, որտեղ նա օրվա 23 ժամն անցկացնում է մենախցում:**

# Ֆրանկֆուրտի կոսովցի ահաբեկիչը կապված է Գերմանիայի իսլամիստների հետ

Ֆրանկֆուրտի օդանավակայանում մարտի 2-ին 21-ամյա մի նահանգական՝ կոսովցի Արիդ Ուկան ատրճանակից կրակ բացեց ամերիկացի զինծառայողների խմբի վրա, սպանելով նրանցից երկուսին եւ ծանր վիրավորելով եւս երկուսին:

Գերմանիայի իշխանությունները հատուկ հանձնաժողով ստեղծեցին միջադեպի քննության նպատակով: ԱՄՆ-ը Գերմանիա գործուղեց իր քննիչներին:

Ականատեսների վկայությամբ, զինված տղամարդը մտել էր բրիտանական մի ռազմակայանից եկած ամերիկացի զինվորական օդաչուների ավտոբուս, գնդակահարել վարորդին, ապա կրակ բացել ուղեւորների վրա: Խուճապից օգտվելով, նա փախուստի էր դիմել, բայց ձերբակալվել էր օդանավակայանի շենքում:

Միջադեպից մի քանի ժամ անց քննիչները պարզեցին, որ մարդասպանը կապված է Գերմանիայի իսլամիստական շրջանակների հետ: Der Spigel-ը գրում է, որ ամերիկացի քննիչները հանցագործին համարում են Գերմանիայում ամերիկյան օբյեկտների վրա հարձակումներ ծրագրող ահաբեկչական ինչ-որ խմբավորման անդամ:

Ֆրանկֆուրտի տարածքում ամերիկացիներն ունեն մի քանի ռազմակայան, որոնք Աֆղանստան եւ Իրաք զորքեր ուղարկելիս օգտագործվում են նյութատեխնիկական աջակցության նպատակով:

Արիդ Ուկայի հարազատներն ապրում են Միտրովիցայում (Կոսովո): Նրանց խոսքերով, Արիդը Ֆրանկֆուրտի օդանավակայանում վերջերս աշխատում էր հորեղբոր հետ:

ԱԶԳ

# Մշակույթ

# «Սովորելը երբեք չի վերջանում»,

## ասում է քառորդ դար բեմին նվիրաբերած արտիստուհին

Դորտմունդի համերգային լեփ-լեցուն դահլիճում անցավ «Դորտմունդի օպերայի եւ համերգի բարեկամներ» անունը կրող կազմակերպության հղացած օպերային շքահանդեսը՝ «Eur-oper- Gala»-ն: Երկու բաժնից բաղկացած ծրագիրը, որ կազմվել էր տուրք տալով հանդիսատեսի ճաշակին, ոչ այլ ինչ էր, քան եվրոպական մի ճամփորդություն: Սիբելիուսի «Կարելիա սյուիտ»-ով՝ Ֆինլանդիա, Գրիգի «Պեր Գյունտի» Սոլվեի հետ՝ Նորվեգիա, Վագների «Թռչող հոլանդացին» մեզ առաջնորդում էր ազատությունների ու ջրանցքների երկիր, իսկ «Թաննհոյզերի» Էլիզաբեթը Գերմանիա բերում, Բրամսի «Հունգարական պարը» մոռացնել էր տալիս ամեն տեսակ հոգնություն, Բեթհովենի «Ֆիդելիոն» նորից ղեկը Գերմանիա էր պտտում, այնուհետ հարեւան Չեխիա՝ եթե Դվորժակի «Սլավոնական պարը» ծանոթ հանգրվան է, ապա համեմատաբար քիչ հնչող «Ջրահարսի» լուսնին ձոնված երգն այնքան թախծոտ ու քնքուշ էր, որ դժվար էր առանց հուզվելու հայտնվել Չայկովսկու «Պիկովայա դամայի» Լիզայի նույնքան զգացմունքային աշխարհում, հետո Շտրաուսի հետ՝ Ավստրիա, Պուչչինիի «Մանոն Լեսկո»-ի ու «Ջաննի Սկիկիի» Լաուրետայի հետ՝ Իտալիա, ուր երաժշտական մեր նավագնացության ղեկն իր ձեռքն է առնում Վերդին՝ «Օթելլոյի» Յագոյի հետ, «Ճակատագրի ուժը» օպերայի Լեոնորայի, այնուհետ «Տրուբադուրի» Լեոնորայի ու Կոնտե Լունայի զուգերգով մեզ հասցնում Իսպանիա:



Համաձայնեք, դժվար ճամփորդություն էր, հանդիսատեսի մի մասը պարզապես զարմացած էր, թե՝ տրամադրությունների, երաժշտական, նաեւ լեզվական տարաբեւեռ այդպիսի մի ճամփորդություն ինչպե՞ս են առանց հոգնության նշույլի գեղեցիկ իրականություն դարձնում բեմում կանգնած արտիստները: Եթե Դորտմունդի ֆիլհարմոնիկի երաժշտական գլխավոր տնօրեն հոլանդացի Յակ վան Սթիինի (Jac van Steen) աշխույժ, հումորախառն տեքստով լեցուն դիրիժորական նավավարումը մեզ ծանոթ աղերս էր գծում Լորիս Ճգնավորյանի ժամանակներին, ապա մենակատարների բուռն ծափերով ուղեկցվող ներկայությունը վկայում էր, թե երաժշտական թռիչքները բարենպաստ վայրէջքներով են պսակվում այն ժամանակ, երբ բեմում, ինչպես ձեւակերպեց համերգավարը՝ աստղազույգ է: Բարիտոն Սայմըն Նիլը (Simon Neal) համեմատաբար քիչ երեւաց բեմում, իսկ **Հասմիկ Պապյանը**, որ աներեւակայելի արագ մի կերպարից, մի լեզվից անցնում էր մյուսին, միայն իրեն հատուկ հմայքով, լեգատոների նրբասահ, հաճախ աղոթք հիշեցնող պիանիսիմոներով, ըստ պահանջի՝ նաեւ հախուռն դրամատիզմով ու իր հանդեպ առանձնահատուկ պահանջկոտությամբ գերմաներենի, իտալերենի, ռուսերենի իր իմացությանը հավելել էր երկու չքնաղ կերպարների՝ Սոլվեի ու ջրահարսի բնագիր նորվեգերենն ու չեխերենը: Անկասկած, հենց նրա ներկայությամբ էր պայմանավորված երաժշտական այդ իրադարձությունը շքահանդես կոչելը:

Համերգի ավարտին ճեմասրահում ջազի հնչյունների ներքո կարելի էր օգտվել բարի ծառայություններից՝ վայելելով օրվա արտիստների ներկայությունը: Այդ օրը նորից համոզվեցինք՝ Պապյանի շնորհիվ շատերի շուրթերին էր Հայաստան անունը՝ պայծառ, հզոր շեշտադրմամբ: «Մի ուրույն երկյուղածությամբ եմ հետեւում, երբ ծրագրում Չայկովսկու «Պիկովայա դաման» է ընդգրկվում: Ձեր Լիզան իր հրաշալի ռուսերեն հնչումով սիրտս տակնուվրա արեց», հուզմունքը տեղ-տեղ նույնիսկ չզսպելով ասաց մի ռուս հանդիսատես: «Աստված ոչինչ չի խնայել՝ թե՛ գեղեցիկ ձայն, թե՛ չքնաղ արտաքին, թե՛ երջանիկ ընտանիք», Հասմիկի երկրպագուների աչքից չվրիպեց նրան ուղեկցող ամուսնու, սկեսրայրի ու դստեր սիրագորով հայացքները: Պապյանին շնորհավորելու, նրա հետ լուսանկարվելու պահը շատերը բաց չթողեցին: Մենք էլ նրան ուղղեցինք մեր ձայնագրիչը:

**- Ի՞նչ կասեք համերգային ծրագրի մասին:**

- Երկար ընդմիջումները, մի երկրից, մի արիայից մյուսը թռիչքներն ինձ համար շատ դժվար էին ու անսպասելի: Բայց նաեւ հետաքրքրական էր: Դժբախտաբար ընդամենը մի փորձ էինք արել եւ կենտրոնանալ հսկայական ծրագրի, տարբեր լեզուների, մեկից մյուսն անցումներին մի քիչ դժվար էր, բայց վերջին հաշվով այդպիսի դասիարկչական ծրագիրն էլ իր նպատակն ունի եւ կարծեմ տեղ հասավ:

**- Այս համերգին ցույց տվեցիք, որ ոչ միայն նոր դերերգեր, այլեւ նոր լեզուներ սովորելու Ձեր ընթացքը չի վերջանում:**

- Այո: Այս անգամ չեխերեն եւ նորվեգերենն էին: Իհարկե սովորելու բան միշտ կա, եւ դա չի վերջանում: Նորվեգերենը մի քիչ դժվար էր, որովհետեւ հենակետ չունեի, պարզապես պիտի մեխանիկորեն անգիր սովորեի, դա էլ լավ է, որովհետեւ բժիշկներն ասում են՝ հիշողությունը թարմ պահելու համար ուղեղին այդպիսի վարժություններ պետք են: Բայց բավականին մեծ աշխատանք էր ինձ համար:

**- Կողքից նայելով թվում է, թե 25 տարվա բեմական կյանքում հաջողել եք բոլոր մեծ հեղինակներին, մեծ կերպարներին բնագիր լեզուներով՝ իտալերեն ու գերմաներեն, անգլերեն ու ֆրանսերեն, հայերեն ու ռուսերեն անդրադառնալ: Ձեզ՝ մի 25 տարի էլ բեմական կյանք՝ սովորելու մյուս լեզուները:**

- 25 տարի հասուտ չէ, ես շատ լավ գիտակցում եմ, որ 25 տարին բավականին երկար ժամանակ է: Բեմում պիտի մնամ այնքան, ինչքան որ կկարողանամ գոհացնել հանդիսատեսին: Իմ ուսուցչուհին, որ Մեծ տիկինն էր Հայաստանի եւ մեր ազգի (Տաթեւիկ Սազանդարյանի մասին է խոսքը- Ան. Հ.), միշտ ասում էր՝ ավելի լավ է 5 տարի շուտ, քան 5 րոպե ուշ հեռանալ բեմից: Այնպես որ ես դա շատ լավ գիտակցում եմ:

**- Ձեր ձայնի գեղեցկությունը, լեփ-լեցուն դահլիճը, մամուլի գնահատականները վկայում են, թե դեռ հեռու է այդ պահը: Դառնանք ծրագրին: Քաղաքական ենթատեքստ կա՞՝ եվրոպական այսպես կոչված ճամփորդությունը նպատակ ունի՞ երկրները մերձեցնել:**

- Ես համերգի ծրագրի պատրաստմանը բոլորովին չեմ մասնակցել: Դա եղել է տվյալ գործերը կատարելու պատվեր: Իհարկե լինում են նաեւ այնպիսի դեպքեր, երբ փոխզիջումների պետք է գնալ՝ հասկանալով ունկնդրի պահանջը, հաշվի առնելով սպասելիքները: Եթե ինձ մնար, ուրիշ տեսակ կկազմեի ծրագիրը:

**- Համերգի կազմակերպիչ մարմնի մասին խոսենք: Սատարո՞ւմ են դասական երաժշտության տարածմանը:**

- Նախ եւ առաջ հովանավորների խնդիրը կա: Այսպիսի համերգները նրանց համար կարծես հաշվետվություն են, ինչ-որ տեղ երախտագիտության խոսք՝ հովանավորներին դահլիճ բերելու, նրանց ցույց տալու իրենց արածի արդյունքը: Դվորժակի «Ջրահարսը» հենց այդ պատճառով երգեցի, դա շնորհակալություն ասելու մի ժեստ էր. հովանավորները շատ մեծ գումարներ են ծախսել օպերայում այդ ներկայացումը բեմադրելու համար: Իսկ կազմակերպիչները՝ «Դորտմունդի օպերայի եւ համերգի բարեկամները» օպերայի մեծ սիրահարներ են, ճամփորդում են, շատ բան գիտեն, շատ բան սովորում են: Նրանց հիմնական նպատակն է երիտասարդներին ներգրավել իրենց շարքերը, որ շատ խրախուսելի է:



**- Իսկ Հայաստանում տեսնո՞ւմ եք նման կառույցի ստեղծման անհրաժեշտություն: Մենք էլ ունենք օպերա, դասական երաժշտություն սիրող, գնահատող մարդիկ:**

- Եվ շատ ունենք: Ունենք այնպիսի ունկնդիր, որի առջեւ խոնարհվել կարելի է: Ամենամեծ ուրախությունը, ամենամեծ հաճույքն ինձ համար «Աիդան» կատարելիս այդպիսի դահլիճ տեսնելն էր, այն հանգամանքը, որ մենք դեռեւս ունենք լավագույնը ներկայացնելու արժանի ունկնդիր: Պարզապես այդ ունկնդիրը որեւէ խմբավորման մեջ չի ընդգրկվել, անհատներ են: Մեզ մոտ իհարկե տարբեր են կառուցվածքները:

**- Կարելի՞ է մոդելը կիրառել:**

- Իհարկե: Մոդելը կիրառելուց առաջ օպերային թատրոնի ղեկավարությունը պիտի աշխատի երիտասարդներին բերել թատրոն, ինչպես դա արվում էր իմ ժամանակ: Առաջին անգամ առաջին դասարանի աշակերտուհի էի, երբ աբոնեմենտով մեր դպրոցին օպերա էին տարել: Նույնիսկ հիշում եմ՝ այնպիսի տեղում էի նստած, որ ոչինչ չէր երեւում, միայն լսում էի եւ այնպես էի տպավորված, որ ամիսներ շարունակ չէի կարող մոռանալ: Այնպես որ առաջին հերթին դա է պետք վերականգնել: Առանց դրա հնարավոր չէ երիտասարդներին օպերային թատրոն բերել եւ կրթել:

**- «Աիդայի» ունկնդիրը հույս տալի՞ս էր:**

- Շատ, շատ մեծ հույս: Եվ իհարկե նկատելի էր այն ծարավը, որ մարդիկ ունեին: Ինչպիսի հաճույքով, ինչպիսի մեծ գիտելիքներով եւ ինչպիսի սուր աչքով եւ ականջով էին եկել: Այնպիսի՜ հարցեր էին տալիս, նույնիսկ՝ մասնագիտական, նաեւ քննադատություն հնչեց, որ ուրախանալ կարելի է միայն: Հայաստանը ունկնդրի իմաստով դեռեւս ունի մշակութային մակարդակ:

**- Հաջորդ անգամ Պապյանին ո՞ր երկրի ո՞ր բեմահարթակում է վիճակված տեսնել:**

- Հիմա պատրաստվում եմ «Ֆրանչեսկա դա Ռիմինի» երգել, բոլորովին նոր, սարսափելի դժվար մի գործ՝ 4 գործողություն, անընդհատ երգեցողություն եւ շատ դրամատիկ դերերգ: Քիչ բեմադրվող ստեղծագործություն է, եւ իր ստեղծման օրից կարծեմ ընդամենը 4-5 երգչուհի են երգել: Ընդունված է ասել՝ հանձնարարում են միայն մեծ Դիվաներին, ուստի մեծ պատիվ է արժանանալ այս դերերգին: Հիմա ես այն շատ ինտենսիվ սովորում եմ, հույս ունենալով, որ կկարողանամ հաղթահարել առկա դժվարությունները:

**Իտալացի Ռիկարդո Ցանդոնայի 1914-ին գրած «Ֆրանչեսկա դա Ռիմինի» օպերան Հասմիկ Պապյանի գլխավոր դերակատարմամբ ներկայացվելու է իտալական Տրիեստի Ջուզեպպե Վերդի թատրոնում՝ ապրիլի 19-ին, 22-ին, 26-ին, 30-ին: Ազնվական իտալուհի Ֆրանչեսկա դա Ռիմինին (մոտավոր. 1255-1285 թթ.) Դանթեի «Աստվածային կատակերգություն» պոեմի գործող անձն է , ողբերգական սիրո գրական տիպար: Նրա կերպարին են անդրադարձել տարբեր արվեստագետներ՝ ինչպես գրականության, այնպես էլ նկարչության, քանդակագործության, երաժշտության մեջ: Հայ գրողներից մեզ հայտնի է Պարույր Սեւակի անդրադարձը: Պապյանի վերնշյալ դերակատարմանը կանդրադառնանք պրեմիերայից հետո:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Դորտմունդ, Գերմանիա

ՆՈՐ

## Ջեսինդա Փոթիկյանի առաջին խտասկավառակը

«Ֆրեզնո Բի» թերթի լրագրող Մայք Օսեգուեդան ճեպազրույց է ունեցել ամերիկահայ կիթառիստ, 43-ամյա **Ջեսինդա Փոթիկյանի** հետ, որը վերջերս թողարկել է իր առաջին խտասկավառակը Continental Skyline խորագրով: «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում արտատպված հարցազրույցից տեղեկանում ենք, որ Ջեսինդան առնչություններ ունի տեղի ջազային երաժշտության ծրագրերի հետ, նվագակցել է The Blue Divas and The Tower Jazz Ensemble խմբերին եւ նպաստել տեղի նոր տաղանդների հայտնաբերման գործին:

«Մայրս հրաշալի երգչուհի էր եւ դաշնակահարուհի: Ուներ տարբեր ժանրերի (դասականից, օպերային եւ ջազային) երաժշտական ձայնապնակների հսկայական մի հավաքածու, որի ազդեցության տակ էլ մեծացել եմ: Իմ առաջին խմբակային փորձառությունը Ֆրեզնոյի դպրոցական ջազային խմբի հետ է առնչվում, որից հետո տեղափոխվեցի Կալիֆոռնիայի պետհամալսարանը, որտեղ նվագակցեցի երկու տարբեր խմբերի՝ Jazz Band A & B եւ Statesman Big Band-ին, միաժամանակ կիթառ նվագելով Խուան Սերանոյի խմբում: Blue Divas խմբի հետ եմ աշխատել 1994-97 եւ 2000-2006 թվերին» պատմում է Ջեսինդան, որը երկու տարի է աշխատել իր նոր խտասալիկի վրա: Ալբոմում ընդգրկվածներից իր նախասիրած երգերն են Saratoga Suite-ը, Blue Toreh Song-ը եւ A la Mingus-ը:

Հավելյալ տեղեկությունների համար Ֆեյսբուքում փնտրել Jasinda Potikian անունը:

Հ. Ծ.

## Րաֆֆու կենսագրությունը անգլերեն

Իլինոյսում (ԱՄՆ) վետերան լրագրող եւ ֆիզիկոս **Մուրադ Մենեշյանը** անգելերն լեզվով կազմել եւ հրատարակել է հայ մեծանուն վիպասան եւ հասարակական գործիչ Հակոբ Մելիք-Հակոբյանի կենսագրությունը «Րաֆֆի: Մարգարեն Փայաջուկից» ընդհանուր խորագրի ներքո:

«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում գրախոսելով նոր հատորը, **Ժոզեֆ Դաղդիկյանը** հրաշալի գործ է «համարում կատարվածը»:

«Մենեշյանը հսկայական աշխատանք է կատարել ուսումնասիրելով մեծ գրողի կենսագրական մանրամասնությունները, նրա հարաբերությունները ինչպես ընտանիքի անդամների, այնպես էլ՝ այլ գրողների եւ մտավորականների հետ, որոնց թվում հատուկ տեղ էր զբաղեցնում Խրիմյան Հայրիկը: Գիրքը ոգեշնչող է եւ խիստ տեղեկատվական», գրում է նա, ավելացնելով, որ Րաֆֆու գործերից անգլերեն լեզվով «Խենթը» (թարգմ.՝ Դոնալդ Աբգարյանի), «Ջալալեդդին» (թարգմ.՝ Դ. Աբգարյանի) եւ «Տաճկահայքը» (թարգմ.՝ Արա Մելքոնյանի) նույնպես մատչելի են տեղի հայկական գրախանութներում:

Հ. Ծ.

## Համերգ՝ նվիրված Մայրենիի եւ գարնան զարթոնքի տոնին

Այսօր, մարտի 4-ին, ժ.17:00-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը, Երեւանի քաղաքապետարանը եւ Հայ կանանց միջազգային միավորումը կազմակերպում են համերգ՝ նվիրված Մայրենիի եւ գարնան զարթոնքի տոնին:

Համերգը տեղի կունենա Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում (Մաշտոցի պող. 46):

# Հայ շախմատիստուհիների հաղթական օրը

Դոհայում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության նախորդ տուրում կրած պարտություններից հետո Էլինա Դանիելյանը եւ Լիլիթ Մկրտչյանը վերելքով անցկացրին հերթական պարտիաները՝ հաղթանակներ գրանցելով իրենց օգտին:

9-րդ տուրում առաջինն իր մրցավեճն ավարտեց Լիլիթ Մկրտչյանը, որը սպիտակներով խաղում էր չինացի շախմատիստուհի Ժժու Չենի հետ: Վերջինս մատի սպառնալիքի տակ ստիպված էր 50-րդ քայլին հանձնվել: Լիլիթը մրցաշարում 2-րդ հաղթանակը տոնեց ու վաստակելով 4 միավոր, Մարթա Ֆիեռոյի հետ բաժանում է 7-8-րդ տեղերը:

Էլինա Դանիելյանի մրցակցուհին սեւերով խաղացող Մարթա Ֆիեռոն էր: Էլինան կրկին իրեն հիանալի դրսեւորեց: Նրա անցողիկ զինվորը հասել էր 7-րդ հորիզոնական ու սպառնում էր վերածվել թագուհու: Միայն նյութական կորուստների գնով Մարթա Ֆիեռոն կարող էր կանխել զինվորի առաջխաղացումը, սակայն այդ դեպքում եւս խաղը փրկել չէր հաջողվի: Ուստի Ֆիեռոն ավելորդ ժամանակ չվատնելով, 51-րդ քայլին հանձնվեց: Սա Դանիելյանի 7-րդ հաղթանակն էր: Նա 7,5 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը:




Դանիելյանին հետապնդող Մարի Սեբագը սպիտակներով հաղթեց Նանա Ձագնիձեին ու վաստակեց 6,5 միավոր: Վերջինն իր մրցավեճն ավարտած Համպի Կոներուն Սյու Յուհուայի հետ պարտիայում երկարատեւ պայքարից հետո 106-րդ քայլին հաշտություն կնքեց: Կոներուն ունի 6 միավոր: Պիա Կրամլինգը պարտվեց Բատույագ Մոնգոնտույին: Տուրի 2-րդ ոչ-ոքին գրանցվեց Մայա Չիբուրդանիձեի եւ Անտուանետա Ստեֆանովայի պարտիայում:

5 միավորով 4-րդ տեղում է Նանա Ձագնիձեն, որին հաջորդում են 4,5-ական միավոր ունեցող Պիա Կրամլինգն ու Մայա Չիբուրդանիձեն: 2,5 միավորով աղյուսակը եզրափակում է Ժժու Չենը:

Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր: Այսօր կայանալիք 10-րդ տուրում Էլինա Դանիելյանը սեւերով կմրցի Պիա Կրամլինգի, իսկ վաղը սպիտակներով կխաղա Անտուանետա Ստեֆանովայի հետ: Լիլիթ Մկրտչյանի մրցակցուհիները կլինեն Համպի Կոներուն եւ Մարթա Ֆիեռոն:

# 41-ամյա Հովհաննես Թահմազյանը 20-րդ մրցաշրջանը կանցկացնի

Ինչպես տեղեկացանք «Շիրակի» մամուլի քարտուղարությունից, նոր մրցաշրջանի շեմին ակումբի հետ իրենց պայմանագրերը երկարաձգել են թիմի մի քանի ֆուտբոլիստներ: Գառնիկ Սարգսյանն ու Հովհաննես Թահմազյանը նոր պայմանագիր են կնքել մեկ տարով, Տիգրան Դավթյանը՝ 2: Երկարատեւ ընդմիջումից հետո հարազատ կոլեկտիվ վերադարձած Արտակ Գրիգորյանի հետ մեկ տարվա պայմանագիր է կնքվել:

Այսպիսով, 41-ամյա Հովհաննես Թահմազյանը Հայաստանի առաջնություններում իր հոբելյանական՝ 20-րդ մրցաշրջանը կանցկացնի: Այս ֆուտբոլիստն անկախ Հայաստանի ֆուտբոլային տարեգրությունում իր արժանի տեղն ունի: Նա միակն է, որ անփոփոխ մասնակցել է մինչ օրս կայացած ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի նախորդ բոլոր 19 առաջնություններին: Թահմազյանը յուրօրինակ ռեկորդակիրն է նաեւ ՀՀ առաջնություններում (448 խաղ), ՀՀ գավաթի խաղարկություններում (81) եւ պաշտոնական մրցումներում (567) անցկացրած խաղերի քանակով: Թահմազյանը նաեւ «Շիրակի» ռեկորդակիրն է ՀՀ առաջնություններում անցկացրած խաղերի (365) քանակով:

Բացի ֆուտբոլային երկարակեցությունից, Թահմազյանն աչքի է ընկել նաեւ հարազատ ակումբի հանդեպ իր հավատարմությամբ:




1992-ին կայացած ազգային անդրանիկ առաջնությունից մինչեւ 2003-ը ներառյալ նա խաղացել է «Շիրակում»՝ 3 անգամ արժանանալով երկրի չեմպիոնի տիտղոսին, 5 անգամ նվաճելով արծաթե, 2 անգամ՝ բրոնզե մեդալներ: 3 անգամ էլ անվանի վետերանը «Շիրակի» հետ նվաճել է հանրապետության Սուպերգավաթը:

Թահմազյանը միայն 3 մրցաշրջան է բաժանվել հարազատ կոլեկտիվից՝ կրելով «Միկայի» մարզաշապիկը: Այստեղ եւս հաջողություններն ուղեկցել են Թահմազյանին: 2005-2006-ին նա դարձել է Հայաստանի գավաթակիր, 2005-ին՝ Սուպերգավաթակիր: 2 անգամ (2004-2005-ին) ֆուտբոլիստը պարգեւատրվել է արծաթե, մեկ անգամ՝ բրոնզե մեդալներով: Պարգեւների առումով էլ Թահմազյանը յուրօրինակ ռեկորդակիր է: Նրա պարգեւների հարուստ հավաքածուում 13 մեդալ կա, որից 3-ը՝ ոսկե, 7-ը՝ արծաթե, 3-ը՝ բրոնզե: Համեմատության համար նշենք, որ 2-րդ տեղում «Փյունիկի» ավագ Սարգիս Հովսեփյանն է, որն ունի 11 մեդալ: Ճիշտ է, դրանցից 10-ը ոսկե են, ինչը ռեկորդային արդյունք է:

Մարտի 5-ին մեկնարկող Հայաստանի բարձրագույն խմբի 20-րդ առաջնությունում ընդհանրապես քիչ չեն վետերան ֆուտբոլիստները: Բացի Հովհաննես Թահմազյանից, 1992-ի ազգային անդրանիկ առաջնության մասնակիցներ են նաեւ «Փյունիկի» 39-ամյա ավագ Սարգիս Հովսեփյանը, «Գանձասարի» հարձակվողներ, 38-ամյա Արսեն Ավետիսյանը եւ 37-ամյա Արթուր Քոչարյանը, ինչպես նաեւ «Միկայի» 36-ամյա ֆուտբոլիստ Արամ Ոսկանյանը: Նշված ֆուտբոլիստներն, ի տարբերություն Թահմազյանի, տարբեր տարիների հանդես են եկել նաեւ արտերկրում: Հայաստանի առաջնություններում անցկացրած խաղերի քանակով 2-րդ ցուցանիշն ունի Արթուր Քոչարյանը՝ 328: Նրան հաջորդում է 36-ամյա շիրակցի Արարատ Հարությունյանը՝ 325 խաղ: Սարգիս Հովսեփյանը մասնակցել է 319 խաղի: Ընդ որում ՀՀ բարձրագույն խմբում անցկացրած 13 մրցաշրջաններում էլ Հովսեփյանը խաղացել է միայն «Փյունիկում»:

# Հեյ-Կլիչկո մենամարտի շուրջը բանակցությունները վերսկսվել են

WBA-ի վարկածով գերծանրքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Դեւիդ Հեյի եւ Կլիչկո եղբայրների ներկայացուցիչները վերսկսել են բանակցություններն առաջիկայում տիտղոսների միավորման համար մենամարտ անցկացնելու հարցի շուրջը: Դեռեւս այս տարվա սկզբին էին սկսվել բանակցությունները, սակայն հարցը վերջնական լուծում չէր ստացել ու կողմերը պայմանագիր չէին կնքել: Այն ժամանակ Վլադիմիր Կլիչկոն հայտարարել էր, որ գերծանրքաշային կարգում WBO-ի եւ IBF-ի վարկածներով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսները պետք է պաշտպանի ապրիլի 30-ին Դերեկ Չիսորայի հետ կայանալիք մենամարտում: Իսկ Դեւիդ Հեյը ծրագրել էր չեմպիոնական իր գոտին պաշտպանել մայիսի 21-ին Ռուսլան Չագաեւի կամ էլ Ալեքսանդր Պովետկինի հետ մրցավեճում:

Վլադիմիր Կլիչկոն համոզված է, որ Դեւիդ Հեյի հետ մենամարտը կկայանա այս տարվա ամռանը, հավանաբար հուլիսի 21-ին: Նրա մենեջեր Բեռնդ Բենտեն նույնիսկ նշել է, որ մենամարտի անցկացման հավանական վայրը եվրոպական քաղաքներից մեկի մարզադաշտն է լինելու: Իսկ Դեւիդ Հեյի մենեջեր Ադամ Բուտը ներկայումս աշխատում է պայմանագրի վերջնական տարբերակի մշակման վրա: Եթե առաջիկայում չնախատեսված իրադարձություններ տեղի չունենան, ապա ամենայն հավանականությամբ այս ամռանը բռնցքամարտի սիրահարները վերջապես ականատես կլինեն այնքան երկար սպասված Հեյ-Կլիչկո մենամարտին:

ՖՈՒՏԲՈԼ

# Հայաստանից միայն «Փյունիկը»

**Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է աշխարհի ուժեղագույն 400 ակումբների ցանկը: Թիմերի վարկանիշները հաշվարկելիս հաշվի են առնվել 2010-ի մարտից մինչեւ 2011-ի փետրվար ընկած ժամանակահատվածում գրանցված արդյունքները: Հայաստանն այդ ցուցակում ներկայացնում է միայն «Փյունիկը», որը 65 միավորով 346-րդ տեղում է: Նախորդ ամիս ՀՀ չեմպիոնը 349-րդն էր:**

**Դասակարգման ցուցակը շարունակում է գլխավորել չեմպիոնների լիգայի ներկայիս գավաթակիր «Ինտերը»: Իտալական ակումբը դասակարգման ցուցակի առաջատար դարձավ 2010-ի մայիսին՝ չեմպիոնների գավաթը նվաճելուց հետո: 3 ամիս «Ինտերը» «Բարսելոնի» հետ էր գլխավորում ցուցակը, այնուհետեւ օգոստոսից հոկտեմբեր ամիսներին դարձավ միանձնյա առաջատար: Նոյեմբերին դիրքը զիջելով «Բարսելոնին», դեկտեմբերից «Ինտերն» անփոփոխ գլխավորում է դասակարգման ցուցակը: Ընդհանուր առմամբ «Ինտերն» արդեն 22 ամիս գլխավորել է ցուցակը: Այս ցուցանիշով իտալական ակումբը 4-րդ տեղում է: Յուրօրինակ ռեկորդակիրը «Միլանն» է, որը 37 անգամ է ուժեղագույնը ճանաչվել: 33 անգամ ցուցակը գլխավորելու պատվին է արժանացել «Մանչեսթր Յունայթեդը», 31 անգամ՝ «Բարսելոնը»:**

**Դասակարգման ցուցակում «Ինտերին» հաջորդում են «Բարսելոնն» ու Մադրիդի «Ռեալը»: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Մյունխենի «Բավարիան», բրազիլական «Ինտերնասիոնալը», «Մանչեսթր Յունայթեդը», արգենտինական «Էստուդիանտեսը», «Լիվերպուլը», «Պորտոն» եւ «Չելսին»:**

**Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թիմերից ամենաբարձր վարկանիշն ունի Սանկտ Պետերբուրգի «Զենիթը», որը 11-րդ տեղում է: Ուկրաինայի ուժեղագույն ակումբը Կիեւի «Դինամոն» է, որը 18-րդ տեղում է: 22-րդ հորիզոնականն է զբաղեցնում Մոսկվայի ԲԿՄԱ-ն:**

# Պարտություն ավարտական խաղում

ՀՀ չեմպիոն «Փյունիկն» ավարտեց ուսումնամարզական հավաքը Թուրքիայում եւ վերադարձավ Երեւան: Ավարտական խաղում «Փյունիկը» 0-2 հաշվով պարտվեց Ուլյանովսկի «Վոլգային»: Այդ խաղում «Փյունիկի» հիմնական կազմի մի խումբ ֆուտբոլիստներ բացակայում էին, քանի որ մարտի 6-ին Հայաստանի առաջնության մեկնարկում փյունիկցիները մրցելու են Դիլիջանի «Իմպուլսի» հետ: «Վոլգայի» հետ խաղում «Փյունիկի» դարպասը պաշտպանեց ռուս դարպասապահ Սերգեյ Բարսուկովը:

# Վանես Մարտիրոսյանը կմենամարտի մեքսիկացիների հետ

**ԱՄՆ-ում բնակվող նախկին աբովյանցի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Վանես Մարտիրոսյանը գարնանը 2 մենամարտ կանցկացնի: Առաջին միջինքաշային կարգում հանդես եկող հայ բռնցքամարտիկը մարտի 19-ին Մոնրեալում 10-ռաունդանոց մենամարտ կանցկացնի մեքսիկացի Բլադիմիր Էռնանդեսի հետ: Վերջինս 25 տարեկան է, պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 22 մենամարտերից շահել է 18-ը, 4-ում պարտվել է:**

**Ապրիլի 23-ին Վանեսին ավելի լուրջ մրցակից է սպասում: ԱՄՆ-ի Տակերվիլ քաղաքում նա առաջին միջինքաշային կարգում WBC Silver-ի վարկածով չեմպիոնի տիտղոսը կվիճարկի մեքսիկացի մեկ այլ բռնցքամարտիկի՝ փորձառու Սաուլ Ռոմանի հետ մենամարտում: 30-ամյա մեքսիկացին 42 մենամարտ է անցկացրել, որից 34-ում հաղթել է, 8-ում՝ պարտվել:**



**Ինչ վերաբերում է 24-ամյա Վանես Մարտիրոսյանին, ապա նա պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է՝ շահելով բոլոր 28 մենամարտերը:**

# Քոթանջյանի 2-րդ ոչ-ոքին

Իրանում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի 6-րդ տուրում Տիգրան Քոթանջյանը սեւերով ոչ-ոքի խաղաց ուզբեկ գրոսմայստեր Ռուստամ Կասիմջանովի հետ: Հայ շախմատիստը 5 միավորով 2-16-րդ տեղերն է բաժանում: 6-րդ տուրից հետո մրցաշարի միանձնյա առաջատար դարձավ Հոլանդիան ներկայացնող Սերգեյ Տիվյակովը: Սեւերով հաղթելով Դավիթ Բենիձեին, Տիվյակովը վաստակեց 5,5 միավոր: 7-րդ տուրում Քոթանջյանը սեւերով կմրցի ադրբեջանցի Գադիր Հուսեյնովի հետ:

# Հայ աղջիկների հաղթական մեկնարկը

**Ֆուտբոլի Հայաստանի կանանց ազգային հավաքականը հաղթանակով մեկնարկեց Մալթայում անցկացվող 2013-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի նախնական փուլում: 2-րդ խմբում ընդգրկված հայ մարզուհիները մեկնարկային խաղում 1-0 հաշվով պարտության մատնեցին Ֆարերների հավաքականին: Արդեն 7-րդ րոպեին մեր ընտրանու ձեռնարկած գրոհը դիպուկ հարվածով եզրափակեց հավաքականի ավագ Գայանե Կոստանյանը:**

**Առաջին խաղակեսի ավարտին ՀՀ հավաքականը խաղադաշտում մնաց 10 հոգով, երբ հեռացվեց Էլեոնորա Դավթյանը: Թեեւ թվային գերակշռությանը, մրցակցին չհաջողվեց խուսափել պարտությունից: Հուսալի գործելով պաշտպանությունում, մեր հավաքականը խաղը հասցրեց հաղթական ավարտի:**

**2-րդ խմբի մյուս խաղում Մալթայի հավաքականը 1-0 հաշվով առավելության հասավ Վրաստանի մարզուհիների նկատմամբ: Հանդիպման ելքը վճռեց ավելացված ժամանակում Մալթայի հավաքականի ավագ Ռեբեկա Ագուստինոյի խփած միակ գոլը:**

**Հայաստանի եւ Մալթայի հավաքականները 3 միավորով գլխավորեցին աղյուսակը: Վաղը մեր հավաքականը կմրցի վրացուհիների հետ:**

# Լենս Արմսթրոնգը վերջնականապես ավարտեց ելույթները

**«Տուր դը Ֆրանս» հեծանվավազքի յոթակի հաղթող, 39-ամյա ամերիկացի հեծանվորդ Լենս Արմսթրոնգը հայտարարել է, որ վերջնականապես հրաժեշտ է տվել սպորտին: 1996-ին նա առաջին անգամ ընդմիջել էր ելույթները, երբ տեղեկացել էր քաղցկեղով հիվանդ լինելու մասին: Սակայն 2 տարի անց նա վերադարձավ մեծ սպորտ: 2005-ին նա կրկին հեռացավ, սակայն որոշ ժամանակ անց նորից ելույթները վերսկսեց՝ միաժամանակ իր «Լիվսթրոնգ» հիմնադրամի միջոցով օգնելով քաղցկեղով հիվանդներին:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

